

# **ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Գեղամ Մ. Բաղայան**

*Պատմ. գիտ. թեկնածու*

## **ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ**

Մաս 10: Դիարբեքիր քաղաքը և Դերիկի, Սավուրի,  
Բալուի ու Մաղենի գավառները\*

**Բանալի բառեր** - Դիարբեքիր քաղաք, Դերիկ, Սավուր, Մաղենի սանջակ, Բալուի գավառ, Բալու քաղաք, Քաղցրահայաց Սբ Աստվածածին, Արղնի գյուղաքաղաք, Ալլ (Անգո) ավան, Բարձրահայաց Սբ Աստվածածին:

Սույն հոդվածը նվիրված է Դիարբեքիրի վիլայեթի համանուն նահանգային կենտրոնի, ինչպես նաև Դերիկի (Դիարբեքիրի սանջակ), Սավուրի (Մարդինի սանջակ), Մաղենի և Բալուի (Արղանա-Մաղենի սանջակ) գավառների նախաղեղեռյան ժողովրդագրական կազմությանը: Նշված վարչամիավորներից առաջին երկուսն ընկած էին Արևմտյան Տիգրիսից հարավ, իսկ Մաղենն ու Բալուն զբաղեցնում էին վիլայեթի հյուսիսարևմտյան հատվածը:

Ցավոք, ստիպված ենք դարձյալ փաստել, որ թեմային վերաբերող հրատարակություններում անհրաժեշտ տվյալները սակավ են և թռուցիկ, հաճախ՝ նույնիսկ թերի ու հակասական: Դա վերաբերում է ինչպես Դիարբեքիր քաղաքին, այնպես էլ Մաղենի գավառին, ինչը երբեմն զգալի բարդություններ է առաջացնում անհրաժեշտ հետևություններ անելիս: Դա է հիմնական պատճառը, որ հոդվածը շարադրելիս կրկին ստիպված ենք եղել դիմել ժամանակագրորեն ավելի վաղ թվագրվող սկզբնաղբյուրներին: Այս առումով կարևորվում են Գ. Սրվանձտյանցի ուշագրավ տեղեկությունները, որոնք եզակի են հատկապես Մաղենի գավառի կապակցությամբ<sup>1</sup>: Հետաքրքրությունից գուրկ չէ նաև Փ. Նաջարյանցի (Նանարեանց) տեղեկագիրը Դիարբեքիր քաղաքի

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 28.04.2020:

1 Տե՛ս **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հատ. 2, Եր., 1982 (այսուհետ՝ Երկեր-2), հմմտ. «Թորոս աղբար», գրեց **Գ. Վ. Սրուանձտեանց**, մասն Բ, Կ. Պոլիս, 1885, Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, «Լրացուցիչ նյութեր», վավերագիր N 23:

*Վեյս համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Կարի, թիվ 2 (70), ամիս-հունիս, 2020*

վերաբերյալ<sup>2</sup>: Չպետք է մոռանալ, սակայն, որ, իրենց տրամադրության տակ չունենալով այլ, մասնավորապես հայկական աղբյուրներ, երկու հեղինակներն էլ օգտվել են ժամանակի պաշտոնական հաշվառումներից (1870-ական թթ. վերջ): Դիարբեքի քաղաքի էթնոժողովրդագրական կացությունն անհամեմատ ավելի լավ է լուսաբանված Գ. Տեր-Կարապետյանի հոդվածաշարում<sup>3</sup>:

Ցավոք, հետադու նախաեղեռնյան ժամանակահատվածի հայկական աղբյուրներում Արևմտյան Հայաստանի այս հայաշատ քաղաքի և Մադենի գավառի հնարավորինս ամբողջական նկարագրություն մեզ չի հանդիպել, իսկ Տիգրանակերտի (Դիարբեքի) առաջնորդարանի վիճակագրական տեղեկագրերը, ցավոք, բավական հեռու են իրականությունից<sup>4</sup>: Այդ պատճառով Մեծ եղեռնի նախօրեին առկա հայ բնակչության թվաքանակի ճշգրտման հարցն առանձնակի կարևորություն է ստանում օտարազգի որոշ հեղինակների վիճակագրական հաշվարկների քննության լույսի ներքո<sup>5</sup>:

Ավելի ամբողջական և մանրամասն է ներկայացված Բալուի գավառը, որին նվիրված մի շարք աշխատություններ են հրատարակվել դեռ 19-րդ դ. 70-ական թվականներից<sup>6</sup>: Այս առումով հատուկ տեղ են գրավում Գ. Սրվանձտյանցի<sup>7</sup> և Բալահովտի (Բալու) թեմի առաջնորդ Պ. Նաթանյանի<sup>8</sup> գործերը: Նույն ժամանակին է վերաբերում նաև Պողոս քահանա Պողոսյանի՝ Բալուի հայ բնակչության հաշվառումը<sup>9</sup>: Առանձնակի կցանկանայինք նշել Մ. Տերոյանցի (Շվոտ) աշխատությունները, որոնցում հանդիպում են հարցը լուսաբանող հազվագյուտ վկայություններ: Հեղինակը, փաստորեն, առաջին անգամ տեղեկություններ է

2 Տե՛ս ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին III, վավերագիր N 50:

3 Տե՛ս **Տեր Կարապետեան Գեղամ** (Մշոյ Գեղամ), Տարսնի վանքերը: Ուղեորի յիշատակներ, Եր., 2003, էջ 200-205 («Ուղեորի յիշատակներ» հոդվածաշարի՝ Դիարբեքի քաղաքի մեզ հետաքրքրող հատվածը լույս է տեսել Կ. Պոլսի «Արևելք» պարբերականի 1898 թ. N 3283-ում - Գ. Բ.):

4 Տե՛ս «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին 1915 աղէտալի տարին», աշխատասիրեց եւ խմբագրեց **Թեղիկ**, Պոսքըն, 1980 (հմմտ. նույն գրքի 2014 թ. Թեհրանի հրատարակությունը), **Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian**, Les Arméniens dans l'Empire Ottoman a la veille de Genocide, Paris, 1992, հմմտ. **Raymond H. Kévorkian**, Demographic Changes in the Armenian Population of Diarbekir, 1895-1914.-"Armenian Tigranaker/Diarbekir and Edessa/Urfa", edited by Richard G. Hovannisian, Costa Mesa, California, 2006: Այդ բացը Մադենի գավառի հարցում ինչ-որ տեղ թերևս լրացնում է **Մուշեղ Վարդապետի** հոդվածաշարը (տե՛ս «Արևելք», Կ. Պոլիս, 1902, N 5042-5046):

5 Տե՛ս «Отчет о поездке по Азиатской Турции генерального штаба подполковника **Томилова** в 1904 году», часть первая: Район Багдадской железной дороги от Аданы до Мосула, часть вторая: Подробные маршрутные описания пройденных путей от Кавказа через Курдистан и Месопотамию к Средиземному морю, С. - Петербург, 1907, "Diary of Major E. Noel on Special Duty: Memorandum", 1919 (ա. տ.), **Yves Ternon**, Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction. - "Revue d'histoire Arménienne contemporaine", tome IV: numéro special, Paris, 2002:

6 Բալուի մասին վիճակագրական առաջին տվյալները հրատարակվել են դեռ Ղ. Ինձիճյանի հայտնի գրքում (տե՛ս **Ինձիճյան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի: Ասիոյ, Եւրոպիոյ, Ամիրիկոյ և Ամերիկոյ, մասն առաջին: Ասիա, հատ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1806): Սույն հոդվածը շարադրելիս դրանք մասամբ նույնպես օգտագործվել են մեր կողմից:

7 Տե՛ս **Սրվանձտյան Գ.**, Երկեր-2, հմմտ. «Թորոս աղբար», մասն Բ: Ընդ որում, «Երկերում» հրատարակված են նաև արևիվային այնպիսի մանրամասն տվյալներ, որոնք հանգամանքների բերումով հեղինակը չի գետեղել գրքում: Այդ նյութերն այժմ պահվում են ԳԱԹ-ում (տե՛ս Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին III, վավերագիր 39, հմմտ. **Սրվանձտյան Գ.**, Երկեր-2, էջ 535-539):

8 Տե՛ս **Նաթանեան Պ. Շ. Վ.**, Արտօսը Հայաստանի կամ տեղեկագիր Բալույ, Քարբերդու, Չարսանձագի, Ճապաղ Ջուրի, եւ Երզնկայու: Յաւելուած ըստ խնդրանաց ազգասիրաց Խիզան գաւառ, Կ. Պոլիս, 1883:

9 Տե՛ս ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին III, վավերագիր N 39:

հաղորդում նաև գավառի հայկական մելիքությունների վերաբերյալ<sup>10</sup>: Բալուի հայտնի սրբավայր Հայաստի մասին հազվագյուտ տվյալներ են հանդիպում Ա. Գոլոյանի ուշագրավ հոդվածում<sup>11</sup>: Օտարագրի հեղինակներից նախատեղեկյան Բալուի էթնոժողովրդագրական կացությանն է նվիրված նաև 1890-ական թթ. Վանում Ռուսական կայսրության փոխյուպատոս Ա. Կոլյուբակինի աշխատությունը<sup>12</sup>:

Ցեղասպանությունից հետո նույնպես հրատարակվել են Բալուի գավառին նվիրված բազմաթիվ գրքեր: Այդ շարքում պետք է առանձնացնել Հ. Չախսուրյանի<sup>13</sup>, Մ. Կռայանի<sup>14</sup>, Կ. Սուլթանյանի<sup>15</sup> և Տ. Փափազյանի<sup>16</sup> աշխատությունները: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Հ. քահանա Սարգիսյանի (Ալևոր) Բալուի ազգագրությանն ու բարբառին նվիրված գործը, որում հանդիպում են նաև հազվագյուտ տեղագրական նյութեր<sup>17</sup>: Անհրաժեշտ է առանձնացնել գավառի մի քանի գյուղերին նվիրված հրատարակությունները<sup>18</sup>: Ինչ վերաբերում է Մարդինի սանջակի վերոհիշյալ գավառներին, ապա տվյալները վերցրել ենք հիմնականում Ղ. Ինճինյանի երկից, ինչպես նաև շվեդ հետազոտող Ղ. Գաունթի ուշագրավ ուսումնասիրությունից<sup>19</sup>: Հոդվածում ևս հատուկ ուշադրություն ենք դարձրել նշված բնակավայրերի սրբավայրերին (վանքեր, եկեղեցիներ, ուխտավայրեր)<sup>20</sup>:

10 Տե՛ս **Շուտ Մ. Տ.**, Քիւրտ պէլ: Գծեր հայ-քրդական կեանքէն, Ա հատորիկ, Բարիզ, 1902, Բ-Գ հատորիկ, 1903 (Բ հատորիկն ունի «Արամը», իսկ Գ-ն «Անաստուածները» վերտառւթյունը), **Տէրոյեանց Ս.**, Բալու, «Արաքս» հանդէս, գիրք Բ, Ս.-Պետերբուրգ, 1897 [1894-1895]: Այս դեպքում ևս Շեղենի նախօրէին կատարված Տիգրանակերտի (Ղիարբեքիր) առաջնորդական թեմի վիճակագրությունը նկատելիորեն թերհաշվառված է, թեև գուրկ չէ հետաքրքիր տեղեկություններից (տե՛ս **Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian**, նշվ. աշխ., էջ 407-408, հմմտ. **Raymond H. Kévorkian**, նշվ. աշխ., էջ 278-280, «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին 1915 աղէտալի տարին», էջ 395-405):

11 Տե՛ս **Գոլոեան Ա.**, Հայկառ ու ժամկոչ Սարգիս, «Բիւրակն» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899, N 50-52:

12 Տե՛ս **Колобакин А. М.**, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, том 3, часть 2, Т., 1890:

13 Տե՛ս **Չախսուրեան Յ.**, Պատմութիւն Բալահովիտի: Հնուց մինչև մեր օրերը, Պէյրուս, 1974: Հ. Չախսուրյանը առանձին բաժնով հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև հայրենի Հավալ գյուղի մասին:

14 Տե՛ս **Կռայեան Մ.**, Բալու: Բալուի կեանքէն առնուած պատկերներ, յուշեր, չափածոյ քերթուածներ և արծակ էջեր, Անթիլիաս-Լիբանան, 1965:

15 Տե՛ս **Սուլթանեան Կ.**, Բալահովիտ, Անթիլիաս, 1973:

16 Տե՛ս **Փափազեան Տ. Ս.**, Պատմութիւն Բալահովիտի, Նիւ Եորք, 1963: Տ. Փափազյանը հեղինակ է նաև մեկ այլ աշխատության նվիրված հայրենի Հավալ գյուղին (տե՛ս **Փափազեան Տ. Ս.**, Պատմութիւն Բալու Հաւալ գիւղի (հիմնուած Քրիստոսէ առաջ), Պէյրուս, 1960):

17 Տե՛ս «Բալու: Իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը», աշխատասիրեց **Յարութիւն քն. Սարգիսեան** (Ալևոր), Գահիրէ, 1932:

18 Տե՛ս **Թօփալեան Բ.**, Հայրենի գիւղ Օխու, Պոսթըն, 1943 (տեղեկություններ կան նաև հարևան Թեփե գյուղի մասին), **Խրայեան Մ.**, Բալահովիտ (հայ որբի մը ապրումները հայաջինջ սարսափներէն): Հայրենի յիշատակարան, Սոֆիա, 1938, **Մելիքեան Պ.**, Հայրենի շունչով, Պէյրուս, 1969 (հեղինակը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում հայրենի Նեյրի կամ Նեյրիս գյուղի մասին), «Պատմութիւն Պաղնատան», հրատարակութիւն Պաղին գիւղի վերաշինաց և ուսումնասիրաց միութեան, Պոսթըն, 1966:

19 Տե՛ս **David Gaunt**, with assistance of Jan Bet Şawoace and an appendix of documents prepared by Rasho Donef, Massacres, Resistance, Protectors. Muslim-Christian Relations in Eastern Anatolia during World War I, Gorgias Press, New Jersey, 2006, էջ 302:

20 Տե՛ս **Սաֆրաստյան Ա. Խ.**, Կոստանդնուպոլիսի Հայոց պատրիարքարանի կողմից թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 1965, N Ժ, 1966, N Ա, **Ոսկեան Հ.**, Սեբաստիայի, Խարբերդի, Տիրապեքիրի եւ Տրապիզոնի նահանգներու վանքերը, Կիեննա, 1962, **Պալեան Տրդատ** եպս, Հայ վանորայք, Սբ Էջ-

# 1. Դիարբեքիր քաղաք

Վիլայեթի կենտրոնը գտնվում էր **Կարաջաղաղ** (պատմ. Աշիմուն) հրաբխային լեռնազանգվածի հյուսիսային ստորոտին տարածվող **Դիարբեքիրի** դաշտի կենտրոնում՝ Արևմտյան Տիգրիսի արևմտյան ափին՝ գետի ոլորանի կամ աղեղի (արաբ. kâfs) սահմանակցությամբ: Վերջինիս շրջակայքում տարածվում էին քաղաքի բնակիչների գրոսավայրերը, ինչպես նաև Դիարբեքիրի հռչակավոր ձմերուկի և սեխի բանջարանոցները:

Դիարբեքիրը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, որը դեռ Զ.ա. 2-րդ հազարամյակի սեպագիր արձանագրություններում հայտնի է **Amedu** կամ **Amedi** անունով, որտեղից է՝ քաղաքի միջնադարյան **Ամիդ** կամ **Ամիդա** (հայկ. աղբյուրներում՝ նաև **Ամիսուց քաղաք**, **Ամիթ**) անվանումը: Վերջինս գործածական էր ընդհուպ մինչև 19-րդ դ. կեսերը: Նույնիսկ թուրքերն այն կոչում էին **Kara Amid** (Սև Ամիդ), քանի որ քաղաքի ամրությունները կառուցված էին Կարաջաղաղից բերված սև որձաքարով: Սակայն 19-րդ դ. կեսերից աստիճանաբար սկսեց ամրագրվել **Դիարբեքիր** անվանումը, ինչպես դեռ արաբական տիրապետության ժամանակներից կոչվել է քաղաքի շրջակայքը<sup>21</sup>:

Դիարբեքիրն Արևմտյան Հայաստանի առավել բազմամարդ և հայաշատ քաղաքներից էր: Հասանելի սկզբնաղբյուրներում (այդ թվում՝ պաշտոնական և օտարալեզու) հայ բնակչության անընդմեջ գերակշռությունը նկատելի է 19-րդ դ. 70-80-ական թվականներից սկսած: Այսպես, **Գ. Սրվանձտյանցի** և **Փ. Նաջարյանցի** (Նանարեանց, Դիարբեքիրի թեմի առաջնորդ) 1870-ական թթ. վիճակագրական ցուցակներում, որոնցում օգտագործված են օսմանյան պաշտոնական հաշվառման տվյալները, քաղաքի **25 200** բնակչից ավելի քան **11 400**-ը (45.2 %) հայեր էին<sup>22</sup>: Բայց սա նույնպես զգալիորեն թերհաշվառված ցուցանիշ է: Բարձր ճշգրտությամբ աչքի չի ընկնում նաև ռուս հետախույզ, փոխազնդապետ **Տոմիլովի** 20-րդ դարասկզբի հաշվառումը՝ կրկին հիմնված պաշտոնական տվյալների վրա: Վերջինիս հաշվարկներով Դիարբեքիրի 35 000 բնակչից քրիստոնյա էին 18 000-19 000-ը (54 %): Ընդ որում, հայերի թիվը կազմում էր 15 050 (քրիստոնյաների ավելի քան 80 %-ը կամ ողջ բնակչության 43 %-ը)<sup>23</sup>: Եթե նկատի ունենանք, որ պաշտոնական վիճակագրությունը,

միածին, 2008: Բալուխ գավառի համար տես նաև **Ղազարեան Հայկազն Գ.**, Տեղապան թուրքը, Պէյրուք, 1968, **Հայաջյան Գ.**, Դերսիմի հայերի ազգագրությունը, Մասն Ա. Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ), պրակ 5, Եր., 1973:

21 Չարգացած միջնադարից սկսած հայկական միջավայրում պատմական շփոթի հետևանքով տարածում է գտել Ամիդի նույնականացումը Տիգրանակերտ մայրաքաղաքի հետ: Այդ մասին տես **Երուանդ Քասունի**, Ամիդ (Տիարպեքիր)- Տիգրանակերտ (Ֆարդին) շփոթը Հայ պատմագրութեան մեջ, Պէյրուք, 1968:

22 Տես ՊԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, «Լրացուցիչ նյութեր», վավերագիր N 23, թ. 2 ա, ՊԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին III, վավերագիր N 50, թ. 9: Տվյալները համադրված են և կլորացված:

23 Տես **Томиллов**, նշվ. աշխ., մաս 1, էջ 255, մաս 2, էջ 174: 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին Դիարբեքիր քաղաքի բնակչության թվի և ազգային կազմի մասին տես նաև **Гиниус А. И.**, Отчет о поездке 1889 года. Сборник

որպես կանոն, անցկացվում էր թերի և սխալ սկզբունքներով, իսկ քրիստոնյաների մասին տվյալները միտումնավոր կերպով թերհաշվառվում կամ նվազեցվում էին, ապա դժվար չէ եզրակացնել, որ հայերի թիվը ու տեսակարար կշիռը Դիարբեքիում իրականում ավելին էր:

Առաջին աշխարհամարտի նախօրեին քաղաքում հաշվվում էր շուրջ 55 000 բնակիչ<sup>24</sup>: Ընդ որում, այլևայլ տվյալներով հայերի թիվը կազմել է առնվազն 25 000-26 000: Այսպես, ըստ ֆրանսիացի քարոզիչ Ժ. Ռետորեի (père Jacques Rhétoré), քաղաքի հայ բնակչության թիվը **26 200** էր, այդ թվում՝ 1000 կաթոլիկ և 200 բողոքական<sup>25</sup>: Նույն եզրակացությանը կարելի է հանգել նաև Դիարբեքիում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս **Թովմաս Մկրտիչյանի** հաղորդած վիճակագրական տեղեկությունների քննությունից<sup>26</sup>: Իսկ ըստ մայոր Է. Նոյելի՝ Դիարբեքիում հայերի թիվն ավելի մեծ էր՝ **27 500 (2150 տուն կամ 5350 ընտանիք)**<sup>27</sup>: Ըստ էության, տարբեր տվյալների համադրմամբ հայերի տեսակարար կշիռը քաղաքում կազմում էր 47-50 %: Այս առումով Դիարբեքիոյն զիջում էր թերևս միայն Վան քաղաքին<sup>28</sup>: Հետևաբար առնվազն տարօրինակ է Դիարբեքիոյն առաջնորդարանի կողմից Կ. Պոլսոյն պատրիարքարան ներկայացված խիստ թերի և խեղաթյուրված հաշվառումը, որի համաձայն՝ Դիարբեքիոյն հայ բնակչության թիվը կազմել է ընդամենը **3000 (!)**<sup>29</sup>: Մեր կարծիքով՝ սկզբնաղբյուրի այս հատվածը հեղինակի կողմից (**Թեոդիկ**) ենթարկվել է բացահայտ աղավաղման (դա կարելի է բացատրել բնագրի սխալ ընթերցմամբ), և **3000 տան** փոխարեն գրանցվել է **3000 անձ** (ընդգծումը մերն է-Գ. Բ.): Ի դեպ, Փարիզի Նուբարյան ազգային գրադարանում պահվող նույն վիճակագրության մեկ այլ տարբերակում Դիարբեքիոյն քաղաքի հայ բնակչության թիվը նշված է **14 000** (ընդհանուր **45 000**-ից), որը դարձյալ խիստ նվազեցված ցուցանիշ է<sup>30</sup>:

маршрутов, пройденных в совместной поездке Д. Д. Гедеоновым и А. И. Гиппиусом по пути астрономических рейсов Турецкой Армении, Курдистане и Сирии, Тифлис, 1892:

24 Տես «Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ», հայկական պատուիրակության հաշտության կոնֆերանսին ներկայացրած յուշագրի ֆրասերեն բնագրից թարգմանեց **Յ. Պ.**, Թիֆլիս, 1919 (արևելահայերեն տեքստը), էջ 22:

25 Տես Yves Ternon, նշվ. աշխ., էջ 82:

26 Հեղինակը հետևյալն է նշում. «Ազատուած Տիգրանակերտցիներէն, որոնք Հալէպ կը գտնուին հիմա, առած լուրերուն, հաշիւներուն և ցուցակներուն համաձայն՝ բուն քաղաքին հայ բնակչութեան կորուստը կը հաշուուի **25-26 000 ի մօտ** (1915 թ.)» («Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները (ականատեսի պատմութիւն)», գրեց **Թովմաս Գ. Մկրտիչյան** (անգլիական նախկին դեր-հիպատոս Տիգրանակերտի), Գահիրէ, 1919, էջ87):

27 Այդ թվում՝ հայ կաթոլիկէ եկեղեցու **2500** հետևորդներ (**150** տուն կամ **350** ընտանիք): Տես «Diary of Major E. Noel», էջ 10-11: Այլ վիճակագրությունների տվյալների համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ Նոյելը միասին է հաշվարկել կաթոլիկէ և ավետարանական (բողոքական) համայնքների հայության թիվը:

28 Վանում հայերի թիվը հասնում էր 30 000-ի՝ կազմելով քաղաքի բնակչության 66 %-ը (հաշվարկը մերն է) (տես **Քաղայան Գ. Մ.**, Վան-Վասպուրական ատլաս, Եր., 2015, էջ 9):

29 Տես «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին 1915 աղէտալի տարին», էջ 342-343:

30 Տես **Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian**, նշվ. աշխ., էջ 397, հմմտ. **Raymond H. Kévorkian**, նշվ. աշխ., էջ 265: Թերհաշվառված են նաև Ս. Շոցիլյանի տվյալները՝ 12 000-15 000 հայ բն. (ընդհանուր 40 000-ից) (տես **Շոցիլյան Ս.**, Արեւմտահայ աշխարհի, Նիւ Եորք, 1947, էջ 744-745): Փարիզի խորհրդատու լիվին ներկայացված «Հուշագրում» Դիարբեքիոյն հայերի թիվը նշվում է 22 000 (ամբողջ բնակչության 40%-ը), որը թեև մոտ է իրականությանը, սակայն դարձյալ զգալիորեն նվազեցված է (տես «Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ», էջ 22): Այլ

Հայ բնակչությունը գերազանցապես կենտրոնացած էր Դիարբեքիի հյուսիսարևելյան և հարավային հատվածներն ընդգրկող թաղամասերում, որոնք ձևավորվել էին **Սուրբ Կիրակոս**<sup>31</sup> և **Սուրբ Սարգիս** եկեղեցիների շրջակայքում<sup>32</sup>: Սբ Կիրակոս մայր եկեղեցին ուներ 7 խորան, որոնցից 5-ը՝ մեծ, իսկ 2-ը՝ **Սբ Պողոսն** ու **Սբ Պետրոսը**՝ փոքր, որտեղ պատարագը մատուցվում էր նշված առաքյալներին նվիրված տոնական օրերին: Ի դեպ, վերջիններս կառուցված էին **Սբ Մինասի** և **Հուդիտայի** (Օղիտա, Սբ Կիրակոսի մայրը) ավանդատների վրա: Սբ Կիրակոսում կարող էր տեղավորվել մինչև 3000 հավատացյալ: 1883 թ. (կամ 1880 թ.) եկեղեցու հին շենքը հրո ճարակ էր դարձել, սակայն քաղաքի հայության համատեղ ջանքերով կրկին վերաշինվել էր, բայց արդեն ավելի ընդարձակ ու շքեղ հորինվածքով (նախկին 5 խորանի փոխարեն՝ 7-ը): 1913 թ., երբ եկեղեցու զանգակատունը կայծակնահար եղավ, հարևանությամբ կառուցվեց նորը՝ 15 մ բարձրությամբ (2-ն էլ հիմնիվեր քանդվեցին 1915թ.)<sup>33</sup>: Եկեղեցու շրջակայքում էին գտնվում Տիգրանակերտի (իմա՝ Դիարբեքիի) թեմի առաջնորդարանի շենքը և **Ազգային վարժարանը**, ուր հաճախում էր 1500 երկսեռ աշակերտ: 1909 թ. Դիարբեքիում կառուցվեց նաև «**Հառաջդիմական**» կամ «**Հառաջդիմասեր**» երկրորդական բարձրագույն վարժարանը, որն Առաջին աշխարհամարտի նախօրեին ուներ իր փողային նվագախումբը: Սբ Կիրակոսի հայաբնակ թաղամասերն էին՝ **Ֆաթթեհ փաշա**, **Ղարիբ քասթալ** (Գարիպ գասթալ), **Խանչափակ** («խաչ ճամփա», հմմտ. Վանի Խաչփողանը), **Ճեյխ Մաթար**, **Գյավուր մեյդան** (Կեավուր մեյտան), **Հոռնընուց** (իմա՝ «հույների»), եթե տեղանունը հռոմեական տիրապետության ժամանակաշրջանի վերհուշը չէ), **Զոհիկ Վերի** և **Վարի** (Զրիք, բրդերեն Հրիգ - «ջրվեժ»), **Փուսբուչա**, **Զարդախիլ** (Զարտըխիլ), **Բանձր ֆուրնի** (իմա՝ «փոռ») **քուչա**, **Արբաղաշ** (Արպատաշ), **Ալիբարդաղ** (Ալիպարտաղ)<sup>34</sup>:

**Սբ Սարգիսը** գտնվում էր քաղաքի հարավային՝ **Էնթու թաղ** հատվածում: Ուներ 3 խորան և 2 ավանդատուն: Եկեղեցուն կից գտնվում էին հին

հեղինակներից Դիարբեքիի հայության թվին է անդրադարձել նաև Տ. Սկունը, որը հետևյալն է նշում. «Տիարբեքիի հայութեան անձի կրոնատն է (1915 թ.-Գ.Բ.) **35-36 000**: Իսկ շրջակայից անձի կրոնատն է մտաւորապէս **40-45 000**» (ընդգծումը մերն է - Գ. Բ.)» (**Մկուն Տ.**, Ամիտայի արձագանքներ, Ուիհոքըն, Նիւ Դելքի, 1950, էջ 253): Կարծում ենք, որ տվյալ պարագայում քաղաքի տվյալները զգալիորեն ուռճացված են: Ըստ Ե. Քասունու՝ «Քսաներորդ դարու սկիզբին, քաղաքը հաշուած է մօտ **45 000** հայութիւն» (այս տվյալը, փաստորեն, ընդունում է նաև Ս. Կարայանը) («1915-1965: Յուշամատեան Մեծ եղեռնի», Պէրլութ, 1965 (Գ հրատարակութիւն,1987), էջ 401, հմմտ. Sarkis Y. Karayan M. D., Armenians in Ottoman Turkey, 1914. A Geographic and Demographic Gazetteer, London, 2018, էջ 269, 272-273): Սա ևս ուռճացված տվյալ է, քանի որ այդ պարագայում քաղաքի ողջ բնակչության թիվը կազմելու էր շուրջ 90 000, որը որևէ սկզբնաղբյուրով չի հավաստվում:

31 Որոշ ծեռագրական հիշատակարաններում եկեղեցին հիշատակվում է «ընդ հովանեաւ տաճարիս Կիրակոսի եւ մարդ նորա Յուդիտայի» ձևով (տե՛ս «Թորոս աղբար», մասն Բ, էջ 413, 444, 451):

32 Ս. Շոնգիկյանը հիշատակում է նաև Սբ Մինաս երրորդ եկեղեցին (տե՛ս **Շոնգիկյան Ա.**, նշվ. աշխ., էջ 745), որի մասին, սակայն, հիմնական աղբյուրները ոչինչ չեն հաղորդում:

33 Տե՛ս **Մոնճեան Յ.**, Տիգրանակերտ քաղաքը (տեղեկագրական մտքեր), «Տիգրիս» տարեգիրք, Հալեպ, 1946, էջ 14, 16:

34 Տե՛ս **Քաղբոցի**, Երանելի օրեր, «Տիգրիս» տարեգիրք, էջ 33 (փակագծերում տրված է տվյալ թաղի անունը՝ արևմտահայ տառադարձությամբ):

առաջնորդարանի և նորակառույց երկհարկանի դպրոցի շենքերը՝ ընդարձակ պարտեզով: Եկեղեցու շրջակայքում տարածվում էին **Փուսքուչա** (Փուս գուչա), **Մարհաբբա գոխ** (Մարհապպա գոխ), **Շեյթան բազարի** (Շեյթան պազարի), **Գյավուր քուչասի** (Կեավուր գուչասի), **Մար Կոզմա** (Մարգոզմա), **Դավաքաղըրան** (Տավա գալորրան), **Լեյբեկ, Բեքիր փաշա** (Դեքիր փաշա), **Սինեկ բազարի** (Սինեկ պազարի), **Լուլանիրե, Չըխալ կամ Չըխար**<sup>35</sup> հայաբնակ թաղամասերը:

Նշված կրթական հաստատությունները գտնվում էին եկեղեցու իրավասության ներքո: Գործել են նաև «**Անձնվեր**», «**Մեսրոպյան**», «**Պատանյաց**» և «**Համազգային**» ընկերությունների դպրոցները: Դիարբեքիրի վերոհիշյալ եկեղեցիներում մինչև 1915 թ. պահվում էին շուրջ 90 հայերեն ձեռագրեր: Առանձին գրչագիր մասոյաններ են գտնվել նաև անհատների մոտ:

Հայ կաթոլիկներն ունեին **Սբ Գրիգոր Լուսավորիչ** անունով եկեղեցի և դպրոց (տղաների համար): Հայ ավետարանական (բողոքական) համայնքն ուներ մեկ ժողովարան (որոշ տվյալներով՝ 2) և 2 երկսեռ դպրոց: Դիարբեքիրում եղել են նաև անգլիկանական եկեղեցու հետևորդներ, որոնց սակավաթիվ համայնքը 19-րդ դ. վերջին մարել էր<sup>36</sup>:

Քաղաքի քրիստոնյա մյուս ժողովուրդների ներկայացուցիչները տեղաբաշխված էին հետևյալ կերպ<sup>37</sup>.

ա. Հակոբիկյան (յաղուբի) ստորիններ-300-400 տուն, 2500 բնակիչ, եկեղեցին՝ **Ղթըրբլա (Գթըր Պլայ) Սբ Աստվածածին** կամ **Սբ Աստվածամայր**, ունեին 2 դպրոց՝ տղաների և աղջիկների համար:

բ. Կաթոլիկ ստորիններ - 65 տուն, 330 բնակիչ, եկեղեցի, 1 դպրոց<sup>38</sup>:

գ. Քիլիանիներ (հայկական աղբյուրներում՝ «քաղդէացիք») – 300 տուն, 2100 բնակիչ, եկեղեցին՝ **Մար Բթիոն** (Մար Փթյուն), 1 դպրոց (տղաների համար):

դ. Ուղղափառ հույներ և մելքիստներ<sup>39</sup> - 60 տուն, ավելի քան 500 մարդ: Ուղղափառներն ունեին 2 եկեղեցի (մեկը մեսրոպյոխտի նստավայրն էր) և տղաների նախակրթարան («ծաղկոց»), իսկ մելքիստները՝ 1 մատուռ<sup>40</sup>:

35 Տես նույն տեղում, էջ 34: 17-րդ դ. ձեռագրական հիշատակարաններից պարզվում է, որ Սբ Սարգիսը գտնվել է **Չըխալ** (Չըխար) թաղամասում («ընդ հովանեա՛ Ս. Սարգիս...», ի թաղն որ կոչի Չըխալ. մերձ Մերտընու դուռն քաղաքիս») («Թորոս աղբար», մասն Բ, էջ 418, հմմտ. 424-425): Նշենք նաև, որ Սբ Սարգսում 1587 թ. ընդօրինակված մի Հայսնավուրք պահվել է Դիարբեքիրից 25-30 կմ հյուսիս-արևելք գտնվող **Սրուկթակ** գյուղում (20-րդ դ. սկ. Tiliik), որը գտնվում էր Արևմտյան Տիգրիսի Անբար վտակի ծախափնյակը գեաղեցնող Շարք գավառակում: Հայտնի էր նաև Սրուկթակի Սբ Աստվածածին եկեղեցին: Ընդ որում, սկզբնապես Հայսնավուրքը գտնվում էր Սրուկթակից 5 կմ հարավ ընկած **Շամիկ** գյուղում (20-րդ դ. սկ. Şemani): Ըստ էության, այս փաստերը ցույց են տալիս, որ նշված գյուղերը նախկինում հայաբնակ են եղել: Չեռագիրն այժմ պահվում է Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարանում՝ 10326 համարի տակ:

36 Տես **Տեր Կարապետան Գեղամ**, նշվ. աշխ., էջ 200:

37 Վիճակագրական տվյալները՝ ըստ է. Նոյելի (տես «Diary of Major E. Noel», էջ 14, 16-19, հմմտ. **Գեղամ Տեր Կարապետան**, նշվ. աշխ., էջ 200-201, **Томингов**, մաս 1, էջ 255-256, մաս 2, էջ 174):

38 Հակոբիկյան և կաթոլիկ ստորինները գրանցվել են որպես «սյրյանի» (süryani):

39 Այրպես էին կոչվում միարար (ունիատ) կամ կաթոլիկ հույները:

Ուշագրավ է, որ մյուս քրիստոնյաները գրեթե անխտիր գիտեին և կեն-  
ցաղում լայնորեն գործածում էին հայերենը: Ավելին՝ անգամ 19-րդ դ. 70-  
ական թթ. նրանք դիտվել են հայ բնակչության մի մասը («ասորի հայ»,  
«քիլդանի հայ»)՝<sup>41</sup>: Հայերի հետ քաղաքի մյուս քրիստոնյաները (հակոբիկ-  
յան և կաթոլիկ ասորիներ, քիլդանիներ, հույներ՝ ուղղափառ և կաթոլիկ-  
ունիատներ կամ մելքիսներ) ընդհուպ մինչև ցեղասպանությունը կազմել են  
բնակչության 55-60 %-ը: Դիարբեքիրում կար նաև փոքրաթիվ հրեական  
համայնք, որում հաշվվում էր շուրջ 100 ընտանիք (գործել է սինագոգ):

Քաղաքի մահմեդական բնակչությունը կազմված էր թուրքերից, զգալիորեն  
թրքացած դավիկներից (զազաներ) և քրդերից: Պետք է նշել, որ թուրք հորջորջվող  
բնակչության շրջանում մեծ էր ժամանակին իսլամ ընդունած քրիստոնյաների  
տեսակարար կշիռը (հայեր, ասորիներ, հույներ)<sup>42</sup>: Ավելին՝ Դիարբեքիրի շատ  
մզկիթներ երբեմնի հայկական սրբավայրեր էին, որոնք բռնազավթվել էին օս-  
մանյան տիրապետության հաստատման հենց սկզբում (16-րդ դ.)<sup>43</sup>: Դրանցից  
նշանավոր էին 60 խորանանի **Սբ Աստվածածինը** (20-րդ դ. սկ. Դիարբեքիրի  
գլխավոր մզկիթն էր՝ Ուլուջամին), հայոց երբեմնի մայր տաճարը՝ **Սբ Թեոդո-  
րոսը** (Սբ Թորոս), որը թուրքերը վերանվանել էին Ղուրշունլու ջամի, **Սբ  
Երրորդությունը**, **Սբ Հովհաննեսը** ևն: Հնադարյան կառույցներից հռչակավոր  
էր Ամիդ-Դիարբեքիրը եզերող 72 աշտարակներով պարսպաշարը, որը կանգուն  
է առ այսօր: Միջնադարից պահպանվել էին ավետարանիչներին խորհրդանշող  
4 գլխավոր դարպասները («դուռ»)՝ **Հայոց կամ Էրզրումի** (հյուսիսային, թրք.  
Dağkapısı), **Մարդինի** (հարավային), **Հոռոմոց** կամ **Հոռոմ** դուռ (արևմտյան,  
թրք. Rumkapısı) և **Նոր** (արևելյան, թրք. Yenikapısı կամ Şatkapısı, իմա՝ «Տիգրիսի  
դուռ»)։ Քաղաքի հյուսիսարևելյան մասում՝ Փայաս (Բայաս) գետակի ափին  
բարձրացող բլրի վրա, 20-րդ դ. սկզբին պահպանվել էր կիսավեր և ամայի միջ-  
նաբերդը՝ **Ավեր բերդ** անունով (թրք. Virankalesi)<sup>44</sup>: Ուշագրավ կառույցներ էին  
նաև հռոմեական ժամանակաշրջանի ջրանցույց-կամուրջը, որը Կարաջաղաղի  
հյուսիսային լանջերից բխող **Համրվաթ** (Համրվար) հորդառատ աղբյուրից ջուր  
էր հասցնում քաղաք, մոտակա **Բուզլուղ** քարապատ ջրավազանները (թրք.  
Buzluk, իմա՝ «սառցարան»), որտեղ ձմռանը ձևավորված սառույցը՝ բաժանված  
առանձին կտորների, տեղափոխվում էր քաղաքացիների տները և հատուկ պայ-  
մաններում պահվում՝ ամռան տապին օգտագործելու նպատակով ևն: Քաղաքի  
արևմտյան **Հոռոմոց դռան** մերձակայքում Ե. Քյոմյուռնյանը հիշատակում է

40 Գ. Տեր-Կարապետյանի խոսքերով՝ «Եկեղեցնակ» (տե՛ս նույն տեղում, էջ 200-201):

41 Տե՛ս **Սրվանձությանց Գ.**, Երկեր-2, էջ 431-432:

42 Տե՛ս **Томитов**, նշվ. աշխ., մաս 1, էջ 256:

43 Այդ մասին հաղորդում է վենետիկցի ճանապարհորդ Ռամուփոզը (տե՛ս **Ինձիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 217-218):

44 Ղ. Ինձիճյանի տվյալներով՝ 19-րդ դ. միջնաբերդում բնակվել են հայեր և մահմեդականներ: Ի դեպ, 19-րդ դ. սկզբին  
դեռ երևում էին հին եկեղեցու կամ վանքի ավերակները (ամենայն հավանականությամբ՝ հունական, թրք. Manastır) (տե՛ս  
նույն տեղում, էջ 213): Դիարբեքիր քաղաքի մասին ավելի մանրամասն տե՛ս նաև **Սրվանձությանց Գ.**, Երկեր-2, էջ 425-  
438, **Տեր Կարապետնան Գեղամ**, նշվ. աշխ., էջ 200-205, 208-211, **Սոմճեան Յ.**, նշվ. աշխ., էջ 8-10:



ձկներով լի, սրբացված **Չիֆթ-իլիջա** (թրք. Çiftlica-«գույզ ջերմուկ») ջրավազանը (հմմտ. Եղեսիա-Ուրֆայի Հայր Աբրահամի լճակը): Դիարբեքիրն Արևմտյան Հայաստանի առևտրի և արհեստագործության նշանավոր կենտրոն էր:

19-րդ դ. վերջին Դիարբեքիրում լույս է տեսել հայաստառ թուրքերենով շաբաթաթերթ: 1910-1913 թթ. սկսել են հրատարակվել հայերեն պարբերականներ՝ «Անկախ Տիգրիս», «Տիգրիս», «Ցուրեր» և «Թռուցիկ Կարմիր տետրակ»<sup>45</sup>:

Համիդյան հայկական կոտորածների ժամանակ Դիարբեքիրի հայաբնակ մի շարք թաղամասերի բնակիչներ, չնայած ծանր կորուստներին (2000-3000 գոհ), ինքնապաշտպանությամբ փրկվեցին: 1915 թ., սակայն, այս հայաշատ քաղաքում հնարավոր չեղավ կազմակերպել պատշաճ դիմադրություն, թեև Տիգրանակերտի թեմի առաջնորդ **Մկրտիչ վարդապետ Ջղատյանը** (գազանաբար սպանվել է քաղաքային բանտում) կողմ էր ջարդարարներին զենքով դիմակայելու գաղափարին: Հետևանքը եղավ այն, որ Դիարբեքիր քաղաքի (և ընդհանրապես ողջ վիլայեթի) հայ բնակչությունը ենթարկվեց զանգվածային տեղահանության և բնաջնջման: Է. Նոյելի տվյալներով՝ 1919 թ. քաղաք էին վերադարձել ընդամենը 2400 վերապրած որբեր և որբևայրիներ (նախապատերազմյան բնակչության հազիվ 9 %-ը): Ծանր կորուստներ էին կրել նաև մյուս քրիստոնյաները՝ ասորիները (հակոբիկյան և կաթողիկ, քիլդանի) և հույները (ըստ տարբեր համայնքների՝ 51-83 %)<sup>46</sup>:

## ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՍԱՆՋԱԿ

### 2. Դերիկի գավառ

Գրավում էր Դիարբեքիրի սանջակի հարավային հատվածը՝ տարածվելով **Մասիուս** կամ **Մարդինի** լեռների արևմտյան ճյուղավորումներից մինչև վիլայեթի հարավային սահմանագլուխ: Հյուսիսում սահմանակից էր **Դիարբեքիրի** և **Սավուրի (Ավինե)**, արևելքում՝ **Մարդինի**, արևմուտքում՝ **Վերանջեհիրի** գավառներին (Դիարբեքիրի վիլայեթ), հարավում՝ **Չորի** (Դեյր-Էզ-Չոր) ինքնուրույն սանջակին (müstakil sancagi): Գավառի կենտրոնը Դիարբեքիրից շուրջ 65 կմ հարավ՝ **Մազի** լեռնազագաթի ստորոտին գտնվող համանուն ավանն էր, որը հայտնի էր նաև **Դիրեկ** կամ **Դերեկ** անուններով (ասոր. և քրդ. Derike կամ Derké): Դիարբեքիրի առաջնորդարանի 1914 թ. վիճակագ-

45 Տե՛ս «Diyarbakir Vilayetinde Ermeniler/Armenian in Diyarbakir Province», With the postcards from the Collection of Orlando Calumeno, İstanbul, 1911, էջ 7:  
46 Հաշվարկը՝ ըստ Է. Նոյելի տվյալների (տե՛ս «Diary of Major E. Noel», էջ 11, 13-19): Որոշ տվյալներով՝ 1928 թ. Դիարբեքիրում ապրում էր ընդամենը 1500 հայ, որոնք 1940-ական թթ. վերջին արդեն կազմում էին 230 տուն: (տե՛ս **Аванесов С. С.**, Положение национальных меньшинств в Турции, Ер., 1963, էջ 78, 84): Հեղինակը տեղեկությունները քաղել է Սփյուռքի մամուլից («Հայրենիք», «Հայաստանի կոչնակ», «Երևան», «Այգ» ևն): Ներկայումս այս երբեմնի հայաշատ քաղաքում բնակվում են ընդամենը մի քանի տասնյակ հայ ընտանիքներ:

րության համաձայն՝ տեղի հայ բնակչության թիվը **1250** էր (հիմնականում առաքելականներ, կային նաև հայ կաթողիկոսներ): Ավանի կենտրոնում գտնվում էր առաքելական **Սբ Գևորգ** միջնադարյան գեղեցիկ եկեղեցին: Եկեղեցի ունեին նաև հայ կաթողիկոսները (ցավոք, անունը հայտնի չէ): Բացի այդ՝ երկու համայնքներն էլ ունեին դպրոցներ: **Դերիկում** ապրում էին նաև ասորիներ (գերագանցապես հակոբիկյաններ, կային նաև քիդանիներ): **Դերիկ** ավանից շուրջ 10 կմ արևմուտք գտնվում էր **Սբ Դանիել** հայկական վանքը, որից էլ, ամենայն հավանականությամբ, առաջացել է բնակավայրի անունը (ասոր. dâyr > der - «վանք», «մենաստան»):

**Դերիկի** գավառի տարածքում հայերը բնակվում էին մի քանի գերագանցապես քրդաբնակ գյուղերում: Առավել հայաշատը Սբ Դանիելի վանքի հարևանությամբ գտնվող **Բեյրոկ** կամ **Բերոկ** (Պեյրոկ) բնակավայրն էր՝ ավելի քան 530 բնակչով: **Դերիկից** զգալիորեն հյուսիս-արևելք՝ **Մագիդադի** կամ **Ճամռախի** գավառակում, գտնվում էին **Դեշի** (**Դեշան**), **Փիրան** և **Խալիլա** կամ **Խալիլան** գյուղերը (վերջին 2-ում՝ կաթողիկ հայեր): Փոքրաթիվ հայ-կաթողիկական համայնք կար նաև **Դերիկից** շուրջ 25 կմ հարավ ընկած **Սըլմե** կամ **Սալմե** ավանում, որի բնակիչներին սպասավորում էր հարևան **Մարդի-նի** գավառի **Թիլ-Արմեն** ավանի հայ քահանան:

1915 թ. Դերիկի և վերոհիշյալ գյուղերի 2500-ի հասնող հայ և ասորի բնակչությունը գրեթե ամբողջությամբ բնաջնջվեց<sup>47</sup>:

ՄԱՐԴԻՆԻ ՍԱՆՋԱԿ  
3.Սավուրի (Ավինե) գավառ

Գրավում էր Մարդինի սանջակի հյուսիսային հատվածը՝ ընդգրկելով Արևմտյան Տիգրիսի աջափնյա (հարավային) **Սավուր** և **Ճեյխան** վտակների հովիտները: Գավառի գրեթե կենտրոնով՝ հարավից հյուսիս, ձգվում էր **Սուլթան յայլադի** (Sultanyaylağı) փոքր լեռնաշղթան, որը գավառի տարածքը բաժանում էր 2 հատվածի՝ արևելյան՝ **Բուն Սավուր**, և արևմտյան՝ **Ավինե**: Հյուսիսից և արևմուտքից սահմանակից էր **Դիարբեքիրի** սանջակին, արևելքից՝ **Միդիաթի**, հարավից՝ **Մարդինի** գավառներին: Կենտրոնը համանուն գետի ափին գտնվող **Սավուր** ավանն էր: Վաղ միջնադարում այն կոչվել է **Ծավուր** (Ցավուր, բյուզանդական աղբյուրներում՝ Τζαύραζ, ասոր. Sawro, Sor կամ Sur): Բյուզանդական հայտնի ամրոց էր և եպիսկոպոսանիստ<sup>48</sup>:

Համաձայն Ղ. Ինճինյանի տվյալների՝ 19-րդ դ. սկզբին **Սավուրի գավառի** բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը, որոնք օժտված

47 Ուշագրավ է, որ 1940-ական թթ. վերջին Դերիկում դեռ ապրում էին 70 տուն հայեր (տես Аванесов С. С., նշվ. աշխ., էջ 84):  
48 Հետայսու հանդիպող բնակավայրերի անվանումների հունական ձևերը վերցրել ենք Բ. Հ. Հարությունյանի գրքից («Աշխարհացոյց»-ը և չորս Հայքերի խնդիրը, Եր., 1997, էջ 70-71):

Էին մեծ ինքնավարությամբ<sup>49</sup>: Ցավոք, սրանով մեր տեղեկությունները սահմանափակվում են: Դատելով 20-րդ դարասկզբի մեզ հայտնի սկզբնաղբյուրների հաղորդումներից՝ հայկական իշխանությունը ամբողջ 19-րդ դ. ընթացքում աստիճանաբար թուլացել և անկում է ապրել: Ավելին՝ հայերի և ասորիների մեծագույն մասը մահմեդականացվել է և ձուլվել<sup>50</sup>: Դրանում, ըստ էության, չարաբաստիկ դեր խաղաց Բ. Դոան կողմից 1830-1840-ական թթ. որդեգրված քաղաքականությունը, մասնավորապես՝ Սավուրին հյուսիսից սահմանակից **Խարզանի** կամ **Սղերդի** հայ-եզդիական կիսանկախ իշխանության ոչնչացումը<sup>51</sup>: Դիարբեքիի առաջնորդարանի տվյալներով՝ 1914 թ. 1000-ը մի փոքր գերազանցող հայ բնակչությունը պահպանվել էր միայն գավառի վարչական կենտրոնում և վերջինից շուրջ 15 կմ հյուսիս-արևմուտք՝ Շեյխան գետի աջ ափին ընկած **Ավինե** ավանում (ասոր. Owena կամ Awina, այժմ վերանվանված է Sürgücü): Հայերը գերազանցապես կաթոլիկ էին և հիմնականում զբաղվում էին այգեգործությամբ (ըստ Ղ. Ինճիճյանի՝ **Սավուրը** հայտնի էր սալորի բերքով): Մեծ եղեռնի տարիներին գավառի հայերը և ասորիները բնաջնջվեցին: **Կելեթ** (ասոր. Qe leth, թրք. Killit) ասորաբնակ ավանի բնակչությունը դիմադրության անհաջող փորձ կատարեց, որից հետո նույնպես ենթարկվեց գանգվածային կոտորածի (ավելի քան 2000 զոհ):

ԾՆԹ.: Սավուրի գավառում 1914 թ. գործել է 1 հայկական դպրոց՝ 195 աշակերտով:

#### ԱՐՂԱՆԱ-ՄԱԴԵՆԻ ՍԱՆՋԱԿ 4. Բալուի գավառ (Բալահովիտ)

Բալուի գավառն ընդգրկում էր Դիարբեքիի վիլայեթի հյուսիսային՝ Հայկական Տավուսից մինչև Քղիի գետ (պատմ. Միւս Գայլգետ) տարածվող հատվածները: Գավառի կենտրոնական շրջանը զբաղվում էր բարեբեր **Բալուի դաշտը**, որից հարավ՝ Արածանի-Մուրատի ձախափնյակում, տարածվում էր **Աշմուշատի** կամ **Վարդենյաց** հովիտը: Հյուսիսից սահմանակից էր Էրզրումի, արևելքից՝ Բիթլիսի, իսկ արևմուտքից՝ Մամուրեթ-ուլ-Ազիզի կամ Խարբերդի վիլայեթներին: Հարավում Դիարբեքիի վիլայեթի Լըճնի և Մադենի (Արդանայի) գավառներն էին: Կենտրոնը Արածանու աջ ափին գտնվող համանուն քաղաքն էր:

49 Սավուրի մասին հեղինակը հետևյալն է նշում. «**Պառա ինքնագույն և անկախ. բնակիչք նորա ըստ մեծի մասին յագգես հայոց, որք արք են հզօրք և սաստիկ պատերազմողք. իսկ ի քրդաց սակաւք**» (Ինճիճյան Ղ., նշվ աշխ., էջ 230):

50 St u Gaunt, նշվ. աշխ., էջ 257:

51 Այդ մասին տես «Վեմ», 2017, N 2 (58), Հավելված, էջ XXXVII-XXXVIII:

16-րդ դ. - 19-րդ դ. 40-ական թթ. Բալուն Դիարբեքիի էյալեթի իշխանապետություններից մեկն էր (թրք. hünkümet): Կիսանկախ վարչամիավորների ոչնչացումից հետո այն՝ որպես գավառ (թրք. kaza), միացվեց նորաստեղծ Խարբերդի կամ Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթին: Հետամուտ լինելով հայաշատ գավառները տարանջատելու ավանդական քաղաքականությանը՝ օսմանյան իշխանությունները 1885 թ. Արդանա-Մադենի սանջակը, այդ թվում՝ և Բալուի գավառը, միացրին Դիարբեքիի վիլայեթին, որի կազմում այն մնաց մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը: Ընդ որում, գավառի տարածքում պահպանվեցին դեռ միջնադարում ձևավորված ներքին գավառակ-նահիենները՝ **Աշմուշատ** (< Արշամաշատ), **Բուլանուխ** (Վերին և Ներքին), **Գյորդերե**, **Կարաբեքյան** (Խարաբեգյան), **Կարաչոր** (Խարաչոր), **Կենտրոնական** կամ **Մազրվաթ** (Մազուրթ < արաբ. Mâzr'âat - مزعة, բառացի՝ «մեզրեններ»)՝ **Ջավգանի** հետ, **Հուն** (Մարաչոր), **Ոշին** (Օշին կամ Վեշին), **Միվան** (<Սևան), **Օխու** կամ **Եղ** (<Իզոլ)<sup>52</sup>:

Բալուի իշխանապետության էական առանձնահատկություններից էր հայկական մելիքությունների գոյությունը: Ըստ էության, դրանք ենթակա էին Բալուի **ամիրա**-կառավարիչներին, սակայն ներքին հարցերում վայելում էին զգալի ինքնուրույնություն և, ինչպես ցույց են տալիս պահպանված ոչ մեծաթիվ տեղեկությունները, մինչև 19-րդ դ. առաջին տասնամյակները զգալի ուժ էին ներկայացնում: Զաղաքացիական իրավասություններին զուգահեռ՝ հայ մելիքների տնօրինության ներքո էին գտնվում որոշակի զինված ուժեր, որոնց շնորհիվ նրանք հարկ եղած դեպքում կարողանում էին հակահարված տալ տեղի մահմեդական ավատատերերին կամ գավառի տարածք թափանցած ավազակաբարո ցեղերին: Հայտնի էին **Հավավի**, **Սարունանի** կամ **Օխուի**, **Աշմուշատի** (Ծոփքի հնագույն Արշամաշատ մայրաքաղաքի շրջանը), **Խամբլիի** (Դամիշլուք, Եղեգնուտ), **Պաղինի** մելիքությունները: Մասնավորապես աչքի էր ընկնում Արածանու ձախափնյակը զբաղեցնող **Աշմուշատի** գավառակը, որը, փաստորեն, մի քանի բնակավայրերում հաստատված առանձին մելիքական ընտանիքների յուրատեսակ դաշնություն էր: Դրանցից աչքի էր ընկնում մասնավորապես Նաջարանը, որտեղ հայտնի էին **մելիք Միսաքի** (մելիք Միսաքենց)<sup>53</sup>, **մելիք Մուրադենց** և **մելիք Տերսերենց** ազդեցիկ գեր-

52 Հայ բնակչության շրջանում տարածված Բալուի ներքին բաժանման ընկալումն էապես տարբերվել է պաշտոնականից: Հարություն Սարգիսյանի (Ալևոր) տվյալներով՝ Արածանու աջափնյակում ընկած Մազրվաթի (Ջավգանի հետ) և Կարաչորի հայկական գյուղերը խմբավորված էին 2 շրջանների մեջ: 1-ինը կազմում էին Բալուի անմիջական հարևանությամբ գտնվող Արածանու գետափնյա **Վարի գյուղերը**: Ավելի հյուսիս տարածվող նախալեռնային գոտու բնակավայրերը մտնում էին **Վերի գյուղեր** շրջանի մեջ (տես **Սարգիսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 7): Ըստ Մ. Խրայանի՝ **Վերի գյուղեր** (գեղեր) ընդհանուր անունով կոչվում էին Աշմուշատի (հեղինակի աշխատության մեջ՝ Աշմուշտա) գավառակի, այսինքն՝ Արածանու ձախափնյակի բնակավայրերը: Իսկ **Վարի գյուղերը** զբաղեցրել են Արածանու աջափնյակը: Տեղի բնակիչներին աշմուշատցիները կոչում էին «ջրին ընդիացի» (իմա Արածանուց այն կողմ ապրողներ) (տես **Խրայան Մ.**, նշվ. աշխ., էջ 160-162, 165):

53 Տես **Շուտ Մ. Տ.**, Քիրտ պեկ: Գծեր հայ-քրդական կենսքեն, Բ հատորիկ, էջ 7-8, հմտ. **Չախսուրեան Յ.**, նշվ. աշխ., էջ 261:

դաստանները<sup>54</sup>: Պաղինում աչքի էին ընկնում **Խոտոյենց** (Քյուրտոյենք), **Մահտեսյան** և **Օղկասյան** տոհմերը<sup>55</sup>: Աշմուշատի **Թ-րխե** կամ **Թռխե** ավանում հայտնի էին **Խոտյանների**, **Հաջի Դավիթյանների**, **Մրտեսյանների**, **Մանուկյանների**, **Մելիք-Էփսոյանների**, **Խաչիկյանների**՝ մելիքական ծագում ունեցող ընտանիքները<sup>56</sup>: Տեղեկություններ կան նաև Արածանուց հյուսիս գտնվող Ջավզանի գավառակի **Խամըշլի** (Ղամիշլուք) ավանի **Վարդանյան** գերդաստանի ազդեցիկ նահապետ **մելիք Խոտյի** մասին<sup>57</sup>: Որոշ փաստեր թույլ են տալիս խոսել առանձին մելիքությունների միջև եղած ռազմական համագործակցության մասին: Այս առումով հատկանշական է մասնավորապես 19-րդ դ. սկզբին Հավավի **մելիք Մարտոյի** և Մարունանի (Օխու) **մելիք Լամայի** համատեղ պայքարը հարևան Ճապաղջրի բեկի դեմ<sup>58</sup>: Հատկանշական է նաև Հավավի **մելիք Մարտոյի** և հարևան Դերսիմի **Գժըզան** (Կժիքան) դմիկական ցեղի զինված համագործակցությունը վկայող փաստը<sup>59</sup>: Սակայն մահմեդական (քուրդ և դմիկ կամ զազա) ավատատերերի դեմ մշտական կռիվները, ինչպես նաև նորանոր օտար ցեղերի ներթափանցումն ու ուժեղացող ճնշումը քայքայեցին Բալուխի մելիքների երբեմնի հզորությունը: Հայկական մելիքություններն առանձնապես ծանր և անդառնալի կորուստներ ունեցան 19-րդ դ. առաջին տասնամյակներին տիրող աշիրեթային (ցեղային) անիշխանության շրջանում: Միջցեղային կռիվների ընթացքում հատկապես տուժեցին Մագրվաթի, Ջավզանի և Կարաչորի (Խարաչոր) հայաշատ գյուղերը<sup>60</sup>: Ի դեպ, այս ընթացքում գրանցվեցին առանձին մելիքների, անգամ մելիքական ընտանիքների ոչնչացման կամ բռնի կրոնափոխության դեպքեր: Այսպես, իր 3 որդիների հետ սպանվեց **Խամըշլիի** (Ղամիշլուք) վերոհիշյալ մելիք Խոտոն, իսկ մելիքանիստ ավանը, որը, ավանդության համաձայն, ուներ 140 տուն հայ բնակիչ, վերածվեց նոսրաբնակ գյուղակի<sup>61</sup>: Հատկանշական է, որ Վարդանյան տոհմի վերապրած մյուս անդամները հարկադրաբար իսլամ ընդունեցին և ձուլվեցին՝ ստանալով **Վերդան-զադե** կամ **Փափագ-օղլի** («տերտերենք») մականունը<sup>62</sup>: Բալուխի Խոշմաթ գյուղի մոտ դավադրաբար սպանվեց նաև **Օխուի** (Մարունան) մելիք Լաման<sup>63</sup>: Աստիճանաբար կորցնելով իրենց ավանդական քաղաքական հեղինակությունը՝ տեղի հայ մելիքները վերածվեցին սովորական գյուղապետերի, թեև առավել ազդեցիկ տոհմերի ո-

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Կարի. թիվ 2 (70), ամբողջ-հունիս, 2020

54 Պահպանվել է մելիք Մուրադի երկհարկանի ընդարձակ տան սյուներից մեկի վրա 1800 թ. արված հիշատակագրությունը (տես **Չախսուրեան Յ.**, նշվ. աշխ., էջ 261-262):  
 55 Ուշադրության արժանի է նաև Պաղինի Ջորապետյան ընտանիքը (տես «Պատմութիւն Պաղնատան», էջ 120):  
 56 Տես **Չախսուրեան Յ.**, նշվ. աշխ., էջ 261, 272:  
 57 Տես **Շուտ Մ. Տ.**, Քիւրտ պէկ: Գժեր հայ-քրդական կեանքէն, Ա հատորիկ, էջ 43:  
 58 Տես **Չախսուրեան Յ.**, նշվ. աշխ., էջ 257:  
 59 Տես նույն տեղում: Դմիկներից (զազաներ) կոչել են նաև կզըլբաշներ:  
 60 Տես **Շուտ Մ. Տ.**, Քիւրտ պէկ: Գժեր հայ-քրդական կեանքէն, Ա հատորիկ, էջ 42-43:  
 61 Տես նույն տեղում, էջ 7, 43: Խամըշլիի հայ բնակչությունը 20-րդ դ. սկզբին անգամ չէր գերազանցում 10-15 տունը:  
 62 Տես **Շուտ Մ. Տ.**, Քիւրտ պէկ: Գժեր հայ-քրդական կեանքէն, Բ հատորիկ, էջ 15-16:  
 63 Տես **Չախսուրեան Յ.**, նշվ. աշխ., էջ 257:

րոշ ներկայացուցիչներ մինչև 19-րդ դ. վերջը դեռ շարունակում էին կրել երբեմնի «մելիք» տիտղոսը<sup>64</sup>:

Մելիքությունների վերացմանը զուգահեռ մեծացավ հայ բնակչության զանգվածային արտագաղթը: Մեծ թվով հայ ընտանիքներ ստիպված էին հեռանալ տարբեր վայրեր՝ ընդհուպ Կիլիկիա և անգամ Կ. Պոլիս (տե՛ս ստորև): Արտագաղթը, որը շարունակվեց ամբողջ 19-րդ դ. ընթացքում, խիստ բացասաբար անդրադարձավ գավառի ազգացեղային նկարագրի վրա: Հեռացած հայերի փոխարեն Խարբերդից, Ճապաղջրից և այլ գավառներից Բալուխ տարածքում վերաբնակվեցին մեծաթիվ մահմեդականներ (զերազանցապես դմիկներ, նաև քրդեր և թուրքեր)<sup>65</sup>: Ի դեպ, Բալուխ գավառում բնակչության ազգային կազմի դիմախեղումները սկսվել էին դեռ բյուզանդական տիրապետության շրջանում (6-7-րդ դդ.)՝ առաջին հերթին ներառելով տեղի հայ ազնվականության լայն շրջանակները: Դրանում հատկապես ճակատագրական դեր խաղաց լայնորեն տարածված հունադավանությունը (քաղկեդոնականություն), որի հետևանքով ժամանակի ընթացքում դավանափոխ եղած բազմաթիվ հայ իշխաններ մասամբ նաև նրանց հպատակ գյուղացիները, դիտարկվելով «**հույներ**» կամ «**հռոռմներ**», աստիճանաբար խորթացան հայեցի հոգեմտածելակերպից, կենցաղից և սովորություններից (այս առումով լավ օրինակ է Կարաբեքյան գավառակի **Հունիան** [Hünyan, քրդ. «հույներ»] գյուղանունը): Օսմանյան տիրապետությամբ Բալուխ գավառի հայ բնակչության այդ հատվածի ձուլման գործընթացը շարունակվեց նոր թափով, և հունադավանները, զանգվածաբար մահմեդականություն ընդունելով, վերջնականապես կորցրին իրենց ազգային նկարագիրը: Առաջին հերթին դա ընդգրկեց Բալուխ գավառի երբեմնի «հունականացած» վերնախավը կազմող «**ամիրաներին**», որոնք, ի դեպ, չէին թաքցնում իրենց հայկական ծագումը<sup>66</sup>: Ինչպես արդեն նշել ենք, պակաս բացասական դեր չխաղացին Բալուխ և հարևան ավատատերերի՝ տարիներով չընդհատվող միջցեղային արյունալի ընդհարումներն ու բախումները: Դրանցից խուսափելու համար բազմաթիվ բնակիչներ նույնպես հարկադրված էին կրոնափոխ լինել: Ինչպես Բարձր Հայքի և Փոքր Հայքի շատ գավառներում, Բալուխ կրոնափոխները ևս կոչվել են «**կեսկեսներ**»<sup>67</sup>: Պահպանված տվյալները ցույց են տալիս, որ նրանք առանձնապես մեծ թիվ էին կազմում **Բուլանուխ**, **Գյորդերե**, **Կարաբեքյան** (Խարաբեգյան), **Հուն** (Մարաչոր), **Ոշին** (Օշին), **Սիվան** (Մևան) և **Օխու**

64 Տե՛ս նույն տեղում, էջ 408:

65 Տե՛ս **Տերոյեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 38, հմմտ. **Էփրիկեան Ս.**, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հատ. 1, Վենետիկ-Ս. Ղազար, 1903, էջ 372-373, **Փափագեան Ս. Ս.**, նշվ. աշխ., էջ 15:

66 Տե՛ս **Խրապեան Ս.**, նշվ. աշխ., էջ 159:

67 Տե՛ս **Շուտ Մ. Տ.**, Քիլիկիա պե՛կ: Գծեր հայ-քրդական կեանքե՛ն, Բ հատորիկ, էջ 35:

(Հիզոյ) գավառակներում<sup>68</sup>: «Կեսկեսների» թիվը զգալի էր նաև Աշմուշատում, Կարաչորում (Խարաչոր) և Զավգանում<sup>69</sup>: Արտագաղթն ու էթնիկական խաթարումներն էապես փոխեցին գավառի ազգացեղային նկարագիրը: Այս առումով թերևս որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Մ. Տերոյանցի (Շուտ) վիճակագրական տվյալները, որքան էլ դրանք մոտավոր, անգամ ուռնացված լինեն: Այսպես, եթե 19-րդ դ. սկզբին Բալուխ գավառում (ներառյալ բերդաքաղաքը) ապրում էին մոտավորապես 60 000-70 000 հայ և 30 000 «քուրդ»<sup>70</sup>, ապա գրեթե մեկ հարյուրամյակ անց հարաբերակցությունն արդեն ձևավորվել էր ի վնաս հայերի՝ համապատասխանաբար 17 000-18 000 և 60 000-65 000<sup>71</sup>: Հայ բնակչությունը նորանոր կորուստներ ունեցավ նաև համիդյան կոտորածների ընթացքում: Որոշ տվյալներով՝ Բալուխ գավառում (ներառյալ քաղաքը) զոհերի թիվն անցնում էր 6400-ից<sup>72</sup>: Հարկ է նշել, որ առանձին գյուղեր դիմադրությամբ կարողացել են խուսափել զանգվածային ջարդից (օր.՝ Ջեթը): Կոտորածների հետևանքով լիովին հայաթափվեցին Քինառ (Քնար), Խուշի (Ղուշի) և Հաջիմեթ (Հաջիմեթան) գյուղերը: Ցավոք, արտագաղթը շարունակվեց նաև հետագա տարիներին, ինչի հետևանքով մինչև 1914 թ. խիստ նվազեց Դեմիրջի, Դիլիմիլի (Տիլիմիլի), Խանառի մեզրե, Խարախայա, Կրպոյի մեզրե, Ղամբարչեյի, Նորչնակ և Քյուրդիկան գյուղերի հայ բնակչության թիվը: Այնուամենայնիվ, Մեծ եղեռնի նախօրեին Բալուխ

68 Մ. Տերոյանցը (Շվոտ) Գյոքդերեի մահմեդականների մասին նշում է. «...քրդերը (ինձ՝ դմիկ-զագաները - Գ. Բ.) նույնպես Հայեր էին մի ժամանակ և որոնք՝ անտանելի հարստահարությանց պատճառով ստիպելով քրդացան և կազմեցին **Կեօկտերեցի** կոչւող հայակեր, արիւնախանձ «քիւրտ» (ինձ՝ դմիկական - Գ. Բ.) ցեղը» (նույն տեղում, էջ 49): Այս առումով ուշագրավ է նաև Հ. Զախտուրյանի հետևյալ ակնարկը. «**Պուլանք** (Բուլանդիս - Գ. Բ.) Նահիեի մնացեալ գիւղերը զազա կամ գուրմանձի գիւղերն են, շատ գիւղեր հայութենէ քրդացած» (**Զախտուրեան Յ.**, նշվ. աշխ., էջ 285): Կարծում ենք, որ մելիք Լամայի դավադիր սպանությունից հետո կրոնափոխությունն աղետալի չափեր է ընդունել նաև Օխու-Սարուճանի գավառակում, թեև տեղի կեսկեսների մի մասն ընդհուպ մինչև 1915 թ. կապը պահեց քրիստոնյա ազգակիցների հետ:

69 Պահպանված տեղեկությունների, ինչպես նաև քարտեզագրական նյութի հիման վրա կազմել ենք վերոհիշյալ գավառակների երեքմեկի հայկական բնակավայրերի ցանկը, որը ներկայացրել ենք առանձին «Հավելվածով»: Հաշվի ենք առել հետևյալ սկզբունքները՝ ա. գրականության մեջ հիշատակվող տեղեկությունները, բ. հայահունչ կամ տվյալ գյուղի հայաբնակ լինելը հուշող (օր.՝ Քիլիսե) տեղանունները: Իհարկե, վերոհիշյալ գավառակներում բնակավայրերի թիվն ավելին էր: Վստահորեն կարելի է ասել, որ օտարանուն բազմաթիվ գյուղեր նույնպես ժամանակին հայաբնակ են եղել, սակայն աղբյուրներում այդ մասին լրացուցիչ տվյալներ չեն հանդիպում:

70 Թեև գավառի մահմեդական բնակչությունն աղբյուրների հիմնական մասում նշվում է որպես «քուրդ», իրականում այն ուներ խայտաբղետ կազմ: Հիմնական հատվածն իրականում կազմում էին դմիկները (զազա, կզլլքաշ): Վերջիններս թեև նույնպես ունեն իրանական ծագում, բայց տարբերվում են քրդերից (կրոնմանջի): Այս առումով բացառիկ են Պ. Նաթանյանի տեղեկությունները: Ըստ այդմ, քրդեր էին բնակվում Կարաչոր, Ոչին, Կարաբեյլան, մասամբ նաև Աշմուշատ գավառակներում: Իսկ Բուլանդիսի, Օխուի, Գյոքդերեի, Սևանի, նաև Կարաչորի մահմեդական բնակչությունը կազմված էր դմիկներից, որոնք, հեղինակի հաշվարկներով, ավելի քան 4 անգամ գերազանցում էին քրդերին: Բալու քաղաքում և մոտակա մի քանի գյուղերում բնակվում էին նաև գերազանցապես քրդական կամ դմիկական ծագում ունեցող թուրքեր (տես **Նաթանյան Պ. Շ. Վ.**, նշվ. աշխ., էջ 68-69, 71-73, 84-85, 88-89, 95-97): Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Գ. Սրվանձտյանցի տվյալները, որոնց համաձայն՝ գավառի օտար բնակչությունը բաշխված էր հետևյալ կերպ՝ 22 500 դմիկ (զազա), 3 500 թուրք և 1 300 քուրդ (տես **Սրվանձտյանց Գ.**, Երկր-2, էջ 535-539):

71 **Շուտ Մ. Տ.**, Քիւրտ պէկ: Գծեր հայ-քրդական կեանքէն, Ա հատորիկ, էջ 6: Իրականում հայերի թիվը 19-րդ դ. վերջին ավելին էր: Այսպես, ըստ Գ. Սրվանձտյանցի, Պ. Նաթանյանի և Պ. Պողոսյանի տեղեկագրերի տվյալների համադրման, 1878 թ. հայերի թիվը գերազանցում էր 22 000-ը (հաշվարկը մերն է - Գ. Բ.):

72 Ավելի մանրամասն տես "Turkey and the Armenian Atrocities", by Rev. **Edwin M. Bliss**, Fresno, California, 1896, էջ 445, հմտ. **Զախտուրեան Յ.**, նշվ. աշխ., էջ 310-312:

գավառը Դիարբեքիի վիլայեթի առավել հայաշատ վարչամիավորներից էր: Է. Նոյելի տվյալներով՝ ցեղասպանությունից առաջ գավառի հայ բնակչության թիվը (ներառյալ քաղաքի բնակչությունը) կազմել է շուրջ 26 000<sup>73</sup>: Հայ բնակչության մեծագույն մասը կենտրոնացած էր **Մագրվաթի** և **Ջավգանի** գյուղերում: Հայերի թիվը զգալի էր նաև **Աշմուշատի**, **Կարաչորի** (Խարաչոր) և **Օխուի** (Հիզու) գավառակներում: Ցեղասպանության տարիներին Բալուի հայությունը ենթարկվեց բռնագաղթի և զանգվածային բնաջնջման: Նույն Է. Նոյելի տվյալներով՝ 1919 թ. վերապրած հայերի թիվն ընդամենը 500 էր<sup>74</sup>: Սակայն հետագա տարիներին նրանք էլ, չտանելով կյանքի անտանելի պայմանները, ստիպված էին հեռանալ բնօրրանից կամ կրոնափոխ լինել և ձուլվել<sup>75</sup>:

### Բալու քաղաք

Գավառի համանուն կենտրոնը գտնվում էր Արածանի-Սո և րատ գետի աջ ափին՝ Դիարբեքիից շուրջ 90 կմ հյուսիս-արևմուտք: Բալուի տները կառուցված էին գետի հյուսիսահայաց ափին բարձրացող դժվարամատչելի **Սբ Մեսրոպ** (բրբռ. **Սբ Մարսուպ**) լեռան լանջերին: Հարավից քաղաքը եզերում էին **Գոհանամք**, **Կապան** և **Մավի** անտառապատ լեռնապարերը: **Սբ Մեսրոպի** գագաթին էր գտնվում **Բալուի** հինավուրց բերդը (Սբ Մեսրոպ): 20-րդ դ. սկզբին պահպանվել էին բերդապարսպի առանձին հատվածներ, իսկ հյուսիսային ժայռերին՝ սեպագիր արձանագրություններ: **Սբ Մեսրոպի** վրա կային մի քանի վիճափոք քարանձավներ, որոնցից նշանավոր էր սիրված ուխտատեղի **Սբ Մեսրոպի ճգնարան** կամ **Սբ Մեսրոպի գերեզման** քարայրը: Ժողովրդի համոզմամբ՝ այստեղ Մաշտոցն ավարտուն տեսքի էր բերել հայոց այբուբենը: Բալուեցի հայերի մեծ մասը հավատում էր նաև, որ քարանձավի մուտքի մոտ գտնվել է հայոց առաջին ուսուցչի շիրիմը: Ավելին՝ հարևան **Սբ Մեսրոպի դպրոց** կոչվող անձավում մատնանշում էին այն հղկված քարե պատը<sup>76</sup>, որի վրա, ավանդության համաձայն, Երանելուն հայտնվել է տառերը գծագրող Աստոճ Աջը: Ըստ Վարդան Արևելցու՝ 13-րդ դարում Սբ Մեսրոպի ճգնարանում՝ կից **Սբ Հակոբ** եկեղեցիով, Գրիգոր վարդապետի ջանքերով

Վլեմ համահայկական հանդես, ժԲ (ԺԸ) 4րորի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

73 Որոշակի ճշգրտումից հետո: Տե՛ս «Վեմ», Եր., 2020, N 1 (69), էջ 181: Մ. Օրմանյանի տվյալներով՝ 20-րդ դ. սկզբին Բալահովտի (Բալու) թեմը, որը համապատասխանում է Բալու գավառին, ուներ 22 300 հայ բնակիչ (տե՛ս «Հայոց եկեղեցին եւ իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը, ու ներկայ կացությունը», նախապէս գաղղիերէն հրատարակեց եւ այժմ հայերէնի վերածեց **Մաղաքիա** արքեպիսկոպոս **Օրմանեան**, նախկին պատրիարք, Եր., 1993 (1914 թ. Կ. Պոլսում լոյս տեսած գրքի արտատպությունը), էջ 262):

74 Տե՛ս «Diary of Major E. Noel», էջ 12:

75 Որոշ տվյալներով՝ 1929 թ. Բալուում (քաղաքն ու գավառը միասին) մնացել էր 750 հայ, որոնցից 520-ը արդեն թուրքացած էին (տե՛ս **Аванесов С. С.**, նշվ. աշխ., էջ 80):

76 Ըստ էության, քարայրում սեպագիր արձանագրության համար նախօրոք պատրաստված, բայց չօգտագործված որմ էր, որն ավելի ուշ կապել են Մաշտոցի հայտնության հետ:



հիմնվել և գործել է մենաստան (**Սբ Մեսրոպի վանք**): Լեռան գառնիկողերին էին գտնվում **Սբ Թորոս** մատուռը և **Սբ Պողոս** ավերակ վանքը, որոնք նույնպես ուխտատեղիներ էին: Ուխտավայր կար նաև **Գոհանամբի** գագաթին: Երբեմնի հայ կյանքի հետքեր էին պահպանվել նաև Բալուխ թրքաբնակ թաղամասերում: Այսպես, **Զովիա** թաղի մզկիթի վերանորոգման ընթացքում բացվել էին խաչադրոշմ քարեր<sup>77</sup>: Ավանդության համաձայն՝ հայկական եկեղեցի է եղել նաև Սբ Մեսրոպ լեռան հարավարևմտյան ստորոտին գտնվող **Քնթիկաքար** կամ **Քնթիկ** (Քիթ) վայրում՝ Արածանու ավին: Ընդ որում, վերջինս հատուկ վիմափոր գաղտնուղիով կապված էր բերդի հետ: Ուշագրավ է, որ 20-րդ դ. սկզբին պահպանվել էր այդ գետնուղու ելքը փակող քարը, որը հայտնի էր **Նունիկ** անունով<sup>78</sup>: Միջին դարերում Բալուում հայտնի էին նաև հոգևոր-մշակութային այլ կենտրոններ՝ **Սբ Գևորգ** վանքը, **Սբ Նշան** եկեղեցին ևն: Ճարտարապետական ինքնատիպությամբ աչքի էր ընկնում Արածանու վրա սրբատաշ քարերով կառուցված 8-թռիչքանի կամուրջը (17-րդ դ., թրք. Muratköprüsü)<sup>79</sup>, որից ոչ շատ հեռու գետն էր թափվում **Ծուրթանց ձորի** (Զրդանձոր) ջրվեժը:

Մինչև 19-րդ դ. 70-ական թթ. եկեղեցիների թվով Բալուն ունեցել է 4 հայկական թաղամաս<sup>80</sup>՝ **Երևան** (եկ.՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ կաթողիկե կամ մայր եկեղեցի), **Տոներ** (եկ.՝ Սբ Աստվածածին), **Սբ Սահակ** (եկ.՝ Սբ Սահակ Պարթև) և **Սբ Կիրակոս** (նույնանուն եկեղեցիով): 1870-ական թվականներին, ի հետևանս Բալուից սկիզբ առած զանգվածային արտագաղթի, Սբ Կիրակոսի թաղն ամբողջովին ամայացավ, իսկ եկեղեցին ավերվեց: Հիմնականում դատարկվեց նաև **Սբ Սահակը**, որտեղ 20-րդ դարի սկզբին կային սակավաթիվ բնակիչներ, իսկ համանուն կիսավեր եկեղեցուն շաբաթ (բրբռ. կիրակնուտ) կամ տոն օրերին միայն մեծահասակ կանայք էին մոմավառություն կատարում: Մեծ թվով տների ավերակներ էին երևում հատկապես Արածանու ավամերձ շրջանում՝ Սբ Մեսրոպի արևելյան կողմում<sup>81</sup>:

Մեծ եղեռնի նախօրեին Բալուում գործում էին միայն **Սբ Գրիգորը** և **Սբ Աստվածածինը**, որոնց կից կային 2 երկսեռ դպրոցներ<sup>82</sup>: Որոշ տվյալներով՝

77 Տե՛ս **Նաթանեան Պ. Շ. Վ.**, նշվ. աշխ., էջ 30:

78 Տե՛ս **Կոչյան Ա.**, նշվ. աշխ., էջ 100-106, հմմտ. **Խրաթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 167:

79 Մ. Խրաթյանը, ամենայն հավանականությամբ հիմնվելով տեղի հայերի շրջանում տարածված ավանդազրույցի վրա, Արածանու կամրջի շինարարությունը վերագրում է Տիգրան Մեծի ժամանակաշրջանին (տե՛ս **Խրաթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 166-167):

80 Բալուի հայաբնակ թաղերի անվանումները վերցրել ենք Մ. Կոչյանի աշխատությունից (էջ 38): Եթե վերջին 2 թաղամասերը կոչվել են համանուն եկեղեցիների անուններով, ապա առաջին 2-ի հարցում հեղինակը զլացել է նշել դրանց սրբավայրերը: Կարծում ենք, որ **Սբ Գրիգորը** գտնվել է Երևան թաղում (թերևս ժամանակին Երևանից բնակչության տեղափոխություն է եղել Բալու, որտեղ նորեկները եկեղեցին կոչել են ի հիշատակ նախկին բնօրրանի համանուն սրբավայրի), իսկ **Սբ Աստվածածինը**՝ Տոներում:

81 Տե՛ս **Տիրոջանց Ա.**, նշվ. աշխ., էջ 38:

82 Ո. Գևորգյանի և Պ. Փաբուջյանի տեղեկագրի համաձայն՝ Մեծ եղեռնի նախօրեին քաղաքում եղել է 4 եկեղեցի՝ Սբ Աստվածամայր (Սբ Աստվածածին ()), կաթողիկե, Սբ Սահակ Պարթև, Սբ Կիրակոս և Սբ Սարգիս ()), նույնպես էլ դպրոց (տե՛ս **Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian**, նշվ. աշխ., էջ 407, հմմտ. **Raymond H. Kévorkian**,

Մբ Գրիգորում պահվում էին ձեռագրեր<sup>83</sup>: Ի դեպ, դեռ 1870-ական թթ. **Սբ Սահակ** եկեղեցում ևս պահվել են գրչագիր մատյաններ<sup>84</sup>: Մբ Աստվածածին եկեղեցում գտնվում էր **Բալահովտի** (Բալու) թեմի ժամանակավոր առաջնորդարանը<sup>85</sup>: Բալուում կային նաև փոքրաթիվ հայ բողոքականներ, որոնք ունեին ժողովարան և դպրոց:

Քաղաքի թրքաբնակ թաղերն էին՝ **Չովիա** (տարածվում էր Մբ Մեսրոպից հյուսիս-արևմուտք, որոշ աղբյուրներում նշվում է որպես քաղաքի արվարձան), **Վարի թաղ** (թրք. Aşağiki mahalle, Արածանու ափին) և **Չարշըբաշի** (թրք. Çarşıbaşı, քաղաքի կենտրոնական հատվածում՝ շուկային կից)<sup>86</sup>:

Պատմական անբարենպաստ պայմանների, պարբերաբար կրկնվող արտագաղթի և օտար էթնիկական տարրերի ներթափանցման հետևանքով Բալու քաղաքի հայ բնակչությունը ևս ժամանակի ընթացքում զգալիորեն նվազել է: Ոչ պակաս բացասական դեր են խաղացել նաև 17-18-րդ դդ. կրկնվող ավերիչ երկրաշարժերը և քաղաքի ընդլայնման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը: Դրա հետևանքով արդեն 19-րդ դարի սկզբին Կ. Պոլսում ձևավորվել էր բալուեցիների ստվար համայնք: Սակայն հայերի արտահոսքն ահագնացավ հատկապես 19-րդ դ. 70-ական թվականներից, ինչի հետևանքով, ինչպես արդեն նշել ենք, ամայացան Բալուի **Սբ Սահակ** և **Սբ Կիրակոս** հայաբնակ թաղամասերը: Որոշ տվյալներով՝ մեծաթիվ հայ ընտանիքներ (Բալուի բնակչության շուրջ 20 %-ը) հաստատվեցին Կիլիկիայի **Ադանա** քաղաքում: Մեծ էր տեղափոխվածների թիվը նաև Խարբերդում, Քղիում, Դիարբեքիրում, Լըճևում, Սևերակում, Արդանայում (Փախըր-Մադեն), Մալաթիայում, Այնթապում, Հալեպում և այլուր<sup>87</sup>: Սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Բալուի հայ բնակչության թիվը շուրջ 100 տարվա ընթացքում (19-րդ դ. սկիզբ - 20-րդ դարի սկիզբ) գրեթե նույնն էր մնացել: Այսպես, Ղ. Ինճիճյանի տվյալներով, Բալուում բնակվում էր 1000 տուն հայ<sup>88</sup>, մեր հաշվարկներով՝ 6000-7000 մարդ: Սակայն արդեն 19-րդ դարի 50-70-ական թթ., հասա-

նշվ. աշխ., էջ 279): Իրականում Բալուի կաթողիկե կամ մայր եկեղեցին, ինչպես հաղորդում են անխտիր բոլոր հասանելի սկզբնաղբյուրները, **Սբ Գրիգոր Լուսավորիչն** էր: **Սբ Սահակն** ու **Սբ Կիրակոսը**, ինչպես վերը նշել ենք, 20-րդ դարի սկզբին արդեն լքված էին և ամայի (շաբաթացյալ): Նշենք նաև, որ Բալուում **Սբ Սարգիս** անունով եկեղեցի չի եղել, և սխալը թերևս գալիս է սկզբնաղբյուրից: Ինչ վերաբերում է քաղաքի դպրոցներին, ապա պետք է ենթադրել, որ, բացի եկեղեցիներին կից ուսումնական հաստատություններից, գործել են նաև մասնավոր նախակրթարաններ: Բալուի դպրոցների մասին տես **Կռայեան Մ.**, նշվ. աշխ., էջ 211-212:

83 Տես նույն տեղում, էջ 209:

84 Չեռագիր Ավետարան է պահվել նաև Հովհաննես մահտեսի Տեր-Ղևորգյանի տանը (տես «Թորոս աղբար», մասն Բ, էջ 378):

85 Տես **Կռայեան Մ.**, նշվ. աշխ., էջ 211:

86 Տես նույն տեղում, էջ 41:

87 Տես **Տերոյեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 38: Ի դեպ, Ադանայի **Ջամուզ-գյուլի** (Ճամուզ Կեօլի) թաղամասի հայերի մեծամասնությունը բալուեցի էր (հիմնականում քաղաքից, նաև շրջակա գյուղերից) (տես **Կռայեան Մ.**, նշվ. աշխ., էջ 38, հմտ. **Փախազեան Ա. Ս.**, նշվ. աշխ., էջ 15):

88 Տես **Ինճիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 225: Ըստ այդմ՝ հայերը կազմել են քաղաքի բնակչության (Ղ. Ինճիճյանի տվյալներով՝ 12 000 մարդ) 50 %-ը, զուցե և ավելին:

նելի աղբյուրների համաձայն, Բալու քաղաքի հայ բնակչությունը զգալիորեն նվազել էր՝ կազմելով 4700 (≈5000) մարդ կամ 650 տուն<sup>89</sup>: Հայ բնակչությունը ծանր կորուստներ կրեց հատկապես 1895-1896 թթ. համիդյան կոտորածների ժամանակ: Վերապատվելի է. Բիսի տվյալներով՝ քաղաքում ավերվեց և թալանվեց 400 տուն, զոհերի թիվը հասավ 1580-ի<sup>90</sup>: Այնուամենայնիվ, չնայած ստեղծված ժողովրդագրական անբարենպաստ պայմաններին, Մեծ եղեռնի նախօրեին Բալու քաղաքում բնակվում էին զգալի թվով հայեր՝ մինչև 6000 մարդ<sup>91</sup>: 1915 թ. քաղաքի հայ բնակչությունը ենթարկվեց զարհուրելի բնաջնջման: Է. Նոյելի տվյալներով՝ ցեղասպանությունը վերապրել և 1919 թ. քաղաք էր վերադարձել ընդամենը 300 մարդ, որոնք ավելի ուշ վերջնականապես լքեցին այն:

### Բալուի գավառի գյուղական բնակավայրերը

Նկատի ունենալով, որ Բալուի գավառի որոշ գյուղեր սկզբնաղբյուրներում բավական մանրամասն են ներկայացված, դրանց մասին խոսում ենք գյուղացուցակներից դուրս:

#### Հավավ (Հաբաբ, Հավավան)

Գտնվում էր Բալու քաղաքից 15 կմ հյուսիս-արևմուտք՝ **Ջավզանի** գավառակում<sup>92</sup>՝ **Վանուցսար** կամ **Անապատ** (թրք. Manastir) լեռնագագաթի հյուսիսային ստորոտին: Գյուղը Դիարբեքիի վիլայեթի առավել խոշոր հայկական բնակավայրերից էր: Որոշ տվյալներով՝ 1890-ական թթ. Հավավն ունեցել է 300-350 տուն, իսկ 1914 թ.՝ ավելի քան 250 տուն (2000 բն.): **Հավավում** գործում էին 2 եկեղեցի՝ **Սբ Աստվածածին**, որտեղ պահվում էր ձեռագիր Ավետարան, և **Սբ Կաթողիկե** (ժողովրդական արտասանությամբ՝ **Սբ**

89 Տե՛ս Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, [Վենետիկ]-Ս. Ղազար, 1855, էջ 42, **Նաթանեան Պ. Ծ. Վ.**, նշվ. աշխ., էջ 32: Գոյություն ունեն նաև այլ, հիմնականում թերիաշվարձված տվյալներ: Մասնավորապես Բալուի առաջնորդական տեղապահ **Պողոս** քահանա **Պողոսյանի** տեղեկագրի համաձայն՝ 1878 թ. քաղաքի հայերի թիվը եղել է 3850 (ողջ բնակչության 41.4 %-ը) (տե՛ս ՉԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին III, վավերագիր N 39, թ. 5): Գ. Սրվանձտյանցը քաղաքում նշում է 3509 հայ բնակիչ (550 տուն) (տե՛ս **Սրվանձտյանց Գ.**, Երկեր-2, էջ 535):

90 Տե՛ս Edwin M. Bliss, նշվ. աշխ., էջ 43, հմմտ. **Ձախտրեան Յ.**, նշվ. աշխ., էջ 310-311:

91 Տե՛ս «Diary of Major E. Noel», էջ 12: Ըստ Դիարբեքիի առաջնորդարանի մի տեղեկագրի տվյալների (պայմանականորեն 1-ին)՝ Բալու քաղաքի հայ բնակչության թիվը կազմել է 5250 (ի դեպ, ընդհանուր 9850-ից) (տե՛ս **Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian**, նշվ. աշխ., էջ 407), իսկ Բալահովտի (Բալուի) առաջնորդարանի կողմից 1911 թ. կազմված տեղեկագրի համաձայն՝ քաղաքում ապրում էր 600 տուն հայ (տե՛ս **Սուլթանեան Կ.**, նշվ. աշխ., էջ 33, հմմտ. **Թովալեան**, Հայրենի գիտություն, Պոսթըն, 1943, էջ 179): Այս տեսանկյունից բացահայտ թերիաշվարձված, անգամ խեղաթյուրված է Դիարբեքիի առաջնորդարանի մեկ այլ տեղեկագրում (պայմանականորեն 2-րդ) առկա 1600 մարդ (250 տուն) ցուցանիշը (տե՛ս «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին 1915 արդէտալի տարին», էջ 395):

92 Ջավզանի մյուս հայաբնակ գյուղերից էին Ձեթը, Մրջմանմեզրեն, Խամըշլին, Խարաբորքը ևն (տե՛ս **Սուլթանեան Կ.**, նշվ. աշխ., էջ 23):

**Կաթուղիկոս**), և 2 դպրոց: Բնակավայրը կազմված էր **Վերին (Վերի)** և **Ներքին (Վարի)** թաղերից: Միջնադարյան ձեռագրական հիշատակարաններում **Հավավը** հիշատակվում է որպես գյուղաքաղաք և, ըստ ավանդության, ունեցել է 700 տուն բնակիչ: Շրջակայքում գոյություն ունեւր 2 արհեստական բլուր (թիւ կամ թել)՝ **Մեծ** և **Փոքր** (Պզտի): Ավանդության համաձայն՝ **Հավավը** նախապես գտնվել է գյուղից մի փոքր արևելք՝ շուրջ 100 մ բարձրություն ունեցող **Մեծ բլրի** շրջանում՝ **Ավագակուցձորի** և **Գանդարաձորի** (Կանտարաձոր) հատման վայրում: Մակայն թշնամական ասպատակությունների և բնական աղետների հետևանքով գյուղի բնակչությունը հարկադրված է եղել աստիճանաբար տեղափոխվել ավելի արևմուտք ընկած **Պզտի բլրի** շրջան: Վերջինիս լանջերին կատարված գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում գտնվել են արձանագիր քարերի մնացորդներ, պղնձե ամանեղեն, անգամ անտիկ դարաշրջանի դրամներ: Մեկ այլ արհեստական բլուր էլ բարձրանում էր **Հավավից** շուրջ 4.5 կմ հյուսիս-արևելք գտնվող **Քուրում** < **Քուրմ** (թրք. Kürüm) «կեսկեսաբնակ» գյուղի մոտակայքում: Գյուղի շրջակայքում հանդիպում էին **Սբ Հակոբ**, **Սբ Կիրակոս**, **Սբ Մարիամ**, **Սբ Գաբրիել**, **Սբ Խաչ**, **Սբ Վառվառ** եկեղեցիների և սրբավայրերի ավերակները: 20-րդ դարի սկզբին այստեղ հավավցիներն ամեն շաբաթ երեկոյան (խսկց. կիրակմուտ) մոմավառություն էին կատարում: Հայտնի էին նաև այլ հնավայրեր: 19-րդ դարի 70-80-ական թթ. **Սբ Աստվածածին** եկեղեցու մերձակայքում հողափորական աշխատանքների ընթացքում երևան էին եկել հնագույն եկեղեցու՝ սրբատաշ քարերով շարված հիմքերը և խորանի ավերակները, որոնք անմիջապես ծածկվել էին թուրքական իշխանությունների միջամտությունը չհարուցելու նպատակով: Այլևայլ վայրերում պահպանվել էին ջրագծերի մնացորդներ, կավե խողովակներ (փողրակներ) ևն: **Սբ Տիկին** աղբյուրի մոտ և **Բազարոց** վայրում (հավանաբար երբեմնի հին շուկայի տեղում) հայտնաբերվել էին խոշոր կարասներ: **Բազարոցում** հայտնի էր նաև **Սուրբի քարակույտ** կոչվող վայրը: Գյուղում և շրջակայքում պահպանվել էին մինչև 3 մ բարձրությամբ, հիմնականում որմնափակ և ժողովրդի կողմից սովորաբար «**Խաչ**» կոչվող 12-13 խաչքարեր: Այս բոլոր խաչքարերն ավանդաբար վերագրվում էին Շոփքի տարածքում քարոզչական գործունեություն ծավալած Սբ Թադևոսին: Հայտնի էին **Էլլոնց**, **Խաչովիտի**, **Քարհատի** (բրբռ. **Քայրոտուց**), **Կարմրենց**, **Գաբռել Խաչ**, **Սբ Ամենափրկիչ** (Սբ Փրկիչ), **Տեր Միստոնց**, **Մարիամ Խաչ**, **Սբ Հակոբի**, **Վերին գերեզմանոցի** խաչքարերը (խսկց. **Խաչեր**): 2 կանգուն խաչքարեր կային նաև **Մարութկանց** կայում: Ի դեպ, Հավավի հին և չօտագործվող գերեզմանատները ևս կոչվում էին **Վերի** և **Վարի Խաչեր**: 1910-1912 թթ. **Մարութկանց** կամ **Զախսուրյանների** կայի մոտ բացվել էր մեկ այլ հնագույն գերեզմանատուն («**Կյաչունց**»):

Վեւ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի. թիւ 2 (70), ամբի-հունիս, 2020

Հավավից շուրջ 2.5 կմ հարավ-արևմուտք խոյացող **Անապատ** կամ **Վա-նուցսար** լեռան հյուսիսահայաց գեղատեսիլ վայրում, որտեղից ծագել է սրբավայրի անունը, գտնվում էր Բալասիտի նշանավոր **Քաղցրահայաց Սր Աստվածածին** վանքը (**Հավավու** կամ **Հավու** [Հավա] վանք): Ավանդաբար վանքի հիմնադրումը նույնպես վերագրվում էր Սր Թադևոսին: **Սր Աստվա-ծածինը** եպիսկոպոսանիստ էր, իսկ հաճախ տեղի վանահայրերը զբաղեցրել են Բալուի թեմի առաջնորդական տեղապահի աթոռը: Պարսպապատ էր և հատուկ խողովակաշարով ջուր էր ստանում **Վանքի չայիր** կոչվող վայրից: **Քաղցրահայաց Սր Աստվածածինը** հայ գրչության հայտնի կենտրոն էր և սիրված ուխտավայր: Ժամանակին ունեցել է հարուստ ձեռագրատուն (մինչև 400 ձեռ.): Սակայն 1870-ական թթ. վերջին վանքի մատենադարանում պահ-պանվել էր ընդամենը 63 մատյան (50 տպագիր գրքերի հետ), որոնք խիստ տուժեցին 1895-1896 թթ. ընթացքում: 1915 թ. նախօրյակին մնացել էր միայն 35 գրչագիր, որոնք էլ ոչնչացվեցին Մեծ եղեռնի տարիներին: Վերոհիշյալ լե-ռան հարավային ստորոտին պահպանվել էին **Անապատ** մենաստանի ավե-րակները: Վերջինից արևմուտք՝ այգեշատ **Ուռեկ** վայրի մերձակայքում, գտնվում էր **Սր Կարապետ** ուխտավայրը՝ կառուցված երբեմնի նույնանուն վանքի տեղում, որի մնացորդները նշմարելի էին դեռ 1870-ական թթ.: Մոտա-կայքում բխում էր անուշահամ **Ուռենյաց** (Ուռեկի) աղբյուրը: Անապատ լե-ռան արևելյան ստորոտին պահպանվել էր **Ճգնավորի խայա** քարայրը, որը ժամանակին մենակյացների ճգնարան է եղել: Հավավում գեղատեսիլ բնու-թյան առկայությունը պայմանավորված էր գյուղի տարածքով հոսող և Արա-ծանի թափվող ջրառատ **Ավագակ** կամ **Մթնիկ** գետակով (օտար արտասա-նությամբ՝ Mitinik): **Ավագակուցձորով** հոսող գետակի ջուրը բնակիչները հատուկ ամբարտակներով, որոնք կոչվում էին «**կապեր**», հասցնում էին Հա-վավի արտերն ու այգիները, որոնք կազմում էին գյուղի հարավում տարած-վող ընդարձակ **Էգիստանը** (Այգեստան)<sup>93</sup>:

1860-ական թթ. սկզբին Բալուի թեմի առաջնորդական փոխանորդ **Մկրտիչ** եպս. **Տիգրանյանի** ջանքերով Քաղցրահայաց Սուրբ Աստվածածին վանքում կարճ ժամանակ գործել է տպարան, որտեղ 1862-1863 թթ. լույս է տեսել խմորա-տիպ «**Արևակ**» թերթը: 1912 թթ. հուլիս-օգոստոս ամիսներին Բալուի առաջ-նորդարանի և Կ. Պոլսի «Միացյալ» ընկերության կողմից վանքում գործել է ամառային դպրոց («վարժապետանոց», 46 աշակերտով և ուսուցչական մեծ կազմով), որի տնօրենն էր **Պետրոս Սրապյանը**: Նախատեսվում էր ԱՄՆ-ի **Բալուի Ուսումնասիրաց միությանց** օժանդակությամբ 1914 թ. այստեղ բացել

93 Հավավ գյուղի տեղադիրքի և մանրատեղանունների մասին ավելի մանրամասն տե՛ս **Չախսուրեան Յ.**, նշվ. աշխ., էջ 370-377:

գյուղատնտեսական **Կեդրոնական վարժարան**, ուր հաճախելու էին շրջակա գյուղերի աշակերտները:

## Ձեթ (թրք. Kariaçmaz)

Գտնվում էր քաղաքից շուրջ 6 կմ արևմուտք՝ Արածանու (Մուրատ) աջ ափին՝ վերոհիշյալ **Ջավգանի** գավառակում: Ուներ **Սբ Թորոս** (Սբ Թեոդորոս) անունով եկեղեցի և դպրոց: Ականատեսների վկայությամբ՝ ինքնատիպ ճարտարապետություն ունեցող կամարակապ **Սբ Թորոսը** սիրված ուխտավայր էր և հիշեցնում էր **Կ. Գուլսի Գեշիկթաշ** (Beşiktaş) հայաբնակ թաղամասի **Սբ Աստվածածին** եկեղեցին: Հատկանշական է, որ եկեղեցու ներսում բխում էր անուշահամ աղբյուր: **Ձեթի** շրջակայքը նույնպես հարուստ էր սրբավայրերով: Ողջ Բալասովում հռչակված էր գյուղից արևմուտք գտնվող **Հայպաթ** (**Հայպատ**) ապառաժ-ուխտատեղին, որի գագաթին կառուցված մատուռը՝ **Հայպաթի վանքը**, ժողովրդի շրջանում հռչակված էր որպես «մուրադատուր»: Այնտեղ այցելում էին հատկապես ամուլ կանայք՝ ինչպես հայ, այնպես էլ դմիկ (գազա) և քուրդ: Սրբացված էր նաև մատուռում պահվող խաչքարը: Ավանդության համաձայն՝ Մեսրոպ Մաշտոցը հայոց այբուբենի ստեղծման ընթացքում ճգնել է նաև **Հայպաթի վանքում**: 1880-ական թթ. Բալուի առաջնորդական տեղապահ **Բարդուղիմեոս** վարդապետ **Պագճյանը** (**Պեգճյան**), ի հիշատակ սրբավայրի համար երկար տարիներ հոգ տարած ժամկոչ Սարգսի (թաղված էր **Հայպաթում**), մատուռը նրա անունով վերածել է **Սբ Մարգիս**, որտեղ տարին մեկ անգամ մատուցվում էր պատարագ: **Հայպաթի** բարձունքին գտնվող խեժատու բևեկնիի (խնկենու) 2 սրբացված ծառերի ճյուղերը ծածկված էին գյուղացիների «նվիրաբերած» կտորներով և շորերով (կենաց ծառ): Սրբավայրի շրջակա ժայռերի և քարաբեկորների վրա պահպանվել էին սեպագրեր, նժույգի պայտերի հետքեր ևն: Հայտնի էր նաև **Ձեթի** արևելքում՝ **Շախշախնի** բլրաշարի եզրին բարձրացող **Սրկընուց** կամ **Սըրնկոց** (նաև **Սրթնոց** կամ **Սիրկնուտ**, օտար հորջորջմամբ՝ Seyirkonuttepe) լեռնակը: Վերջինիս վրա գտնվում էր **Ճգնավորի մղարա** (թրք. Mağara - «քարայր») կամ **Ճգնավորի խայա** (թրք. kaya - «ժայռ», «քար») սրբատեղին, որը կոչվում էր նաև **Շամիրան** կամ **Շամիրնա բլուր**: Այն վիմափոր հսկա ժայռ էր՝ ամենայն հավանականությամբ մենակյացների երբեմնի ճգնարան: Ստորոտից բխում էր հորդառատ **Պիտակ աղբիրը** (բրբռ. **Սպիտակ աղբյուր**): Գյուղի շրջակայքում գտնվում էին նաև այլ սրբավայրեր՝ **Սբ Խաչ** (երբեմնի եկեղեցի կամ վանք), **Թուխ Մանուկ** (2-ն էին՝ միմյանց կից), **Հայալթթոր** (**Հայպաթի** ստորոտին, իմա՝ «Հայպաթի քույր»): **Ձեթը** գավառի բազմամարդ հայաբնակ գյուղերից էր և 1914 թ. ուներ 100-110 տուն բնակիչ:

Վեյն համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) փարի. թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

## Նաջարան

Բալու քաղաքից շուրջ 25 կմ հարավ-արևմուտք՝ Արածանի (Մուրատ) գետի ձախ ափին, գտնվում էր **Աշմուշատի** հայկական մելիքության գլխավոր ավանը՝ **Նաջարանը** (Նանարան, թրք. Yukarı Balkaya): Ավանդաբար մելիքության շրջանում (19-րդ դ. 1-ին կես) այն եղել է խոշոր բնակավայր՝ շուրջ 300 տուն բնակչությամբ: Ուներ **Սբ Մինաս** (Սբ Նշան) անունով եկեղեցի և դպրոց: Գյուղի մոտակայքում գտնվում էր **Սբ Գևորգ** ավերակ եկեղեցին՝ բուժիչ **Լիսաղբիբով** (բրբռ. **Լուսաղբյուր**): **Նաջարանից** 4-5 կմ հյուսիս-արևմուտք՝ երբեմնի հայաբնակ **Խարաբա** գյուղի մոտ՝ Արածանու ձախ ափին, երևում էին Ծոփքի Երվանդունիների հնագույն թագավորության մայրաքաղաք **Արշամաշատի** (բրբռ. **Աշմուշատ** կամ **Աշմիշատ**) և վերջինիս միջնաբերդի ավերակները (ներկայումս ծածկված են ջրով): Մոտակա Վարդենիկի կամ Վարդենյաց լեռնապարի հարավարևմտյան ստորոտին պահպանվել էին Ծոփքի **Արքեղայոս** նախարարին (4-րդ դ.) վերագրվող իշխանական հինավուրց դղյակի ավերակները:

## Նեխրի (Ներխի, Նեռխի, Նախարի, Նեխի)

Գտնվում էր Բալուից շուրջ 7 կմ հյուսիս-արևելք՝ **Գոզգոզկա** կամ **Գոզգոզիկ** լեռնապարի (թրք. Gökdere dağları) հարավային վերջավորության վրա բարձրացող **Միատուն** գագաթի արևմտյան ստորոտին: Գյուղի տները տեղակայված էին **Խաչքան** ժայռոտ տեղանքի դարավանդներին: Ուներ **Սբ Աստվածածին** անունով եկեղեցի (12-րդ դ.) և 2 դպրոց: Եկեղեցում պահվում էր թանկարժեք կազմով սրբացված ձեռագիր **Ավետարան** (Նեխրիի Ավետարան): Եկեղեցու արևմտյան պատին՝ գմբեթի մոտ, ագուցված էր քարե խոյաքանդակ, որի վրա նշարվում էին անձանոթ գրանշաններ: Եկեղեցուն կից կանգնեցված էր շուրջ 2 մ բարձրությամբ **Կապոտ խաչքարը**, որին վերագրվում էր բուժիչ հատկություն կապույտ հազի դեմ: Մեծ հռչակ ուներ նաև Նեխրիի հարավային եզրին գտնվող **Խլաղբյուր** (բրբռ. **Խլաղբիր**) ուխտավայրը, որը հանքային բուժիչ աղբյուր էր խուլերի և ականջի այլևայլ խնդիրներ ունեցող հիվանդների համար: Նեխրիի մոտակայքում գտնվում էր երիտասարդության սիրված զբոսավայրը՝ **Ռշտանի** սառնորակ աղբյուրը, որին կից՝ **Ծակքար** վայրում, պահպանվել էր երբեմնի ժայռափոր մի ճգնարան: Նորագույն ուսումնասիրությունների համաձայն (Ա. Մարգայան)՝ գյուղանունը որոշակի կապ ունի սեպագիր արձանագրություններում հիշատակվող **Նիխիրիանի** երկրանվան հետ:

## Պաղին (Սրինա Պաղին, Բաղին)

Ընկած էր քաղաքից շուրջ 15 կմ հարավ՝ Արածանու (Մուրաստ) ձախափնյակում՝ **Պաղինի** կամ **Պաղինյան** լեռնապարի Սրին (Ցխին) լեռնագագաթի հյուսիսարևելյան ստորոտին: Միջնադարում **Բաղինի** կամ **Պաղինի** «գավառի» կենտրոնն էր (հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում): Ուներ **Սբ Սարգիս** անունով եկեղեցի և 2 դպրոց: Դպրոցներից առաջինը կոչվում էր **Արամյան**, իսկ երկրորդը, որ գործում էր եկեղեցուն կից, կրում էր վերջինիս անունը: Գյուղից արևելք բարձրացող **Պաղինի** լեռնագագաթի բարձունքին՝ **Խարաբա** վայրում, ըստ ավանդության, գտնվել է **Պաղինի** հինավուրց բերդը (**Պաղնա** կամ **Հին բերդ**), որը գետնափոր ճանապարհով իջնում էր մինչև **Յոթնակ աղբյուրի ջուր** գետակ (թրք. Yedigöze): Վերջինիս վրա կանգուն էր **Վերի** կամ **Քաֆի** կամուրջը, որի մերձակայքում երևում էին «**Խարաբնա**» (**Հին բերդի**) գերեզմանատան մնացորդները: Հայտնի ուխտավայր էր գյուղից հարավարևելյան ուղղությամբ ձգվող **Մորնա** լեռնաշարքի վերջավորության վրա բարձրացող **Սուրբ Լույս** (**Օշին** կամ **Վեշին**) լեռը, ուր Վարդավառի տոնակատարությանն ուխտի էին գնում **Աշնուշատի** գավառակի երիտասարդներն ու աղջիկները: **Մորնա** լեռան լանջին վեր խոյացող **Կեսոր քար** ապառաժը պաղինցիների համար յուրատեսակ ժամացույցի դեր էր կատարում: Հայտնի էին նաև **Մեծ** և **Փոքր Մեղանիք** լեռները, **Կեսոր քարի** ստորոտից բխող **Կաթնաղբիքը**, որի ջրերը միանում էին **Երկանլարի** և **Ջաղջիկանի** առուներին՝ կազմելով **Պաղնաջուր** վտակը (թրք. Bağimsuyu): Վերջինս էլ, հոսելով հարավ, միախառնվում էր **Արղնիի** կամ **Մաղենի գետին** (Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքում): Պաղինի շրջակայքում հայտնի էին ավերակ **Սբ Սարգիս** վանքը (**Պաղինու Սբ Սարգիս**) և **Սբ Աստվածածին** եկեղեցին (նախկինում՝ նույնպես վանք): Գյուղը պատմական Բալախովտի հարավային հատվածը գրավող **Բաղին** գավառակի կենտրոնն էր և հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում: **Պաղինը** Բալուխի գավառի առավել բազմամարդ գյուղերից էր (1914 թ.՝ շուրջ 200 տուն հայ բնակչություն):

## Թիլ (Թիլք)

Գտնվում էր Բալուխից շուրջ 15 կմ հարավ-արևմուտք՝ Արածանի-Մուրաստի ձախափնյակը զբաղեցնող Աշնուշատի գավառակում: Ուներ **Սբ Կարապետ** անունով եկեղեցի: Գյուղում պահպանվել էին ևս 1 եկեղեցու ավերակները (**Սբ Աստվածածին** ()): Գործում էր դպրոց: 1890-ական թթ. Բալուխի գավառի բազմամարդ հայաբնակ գյուղերից էր (200 տուն): Հետագա տասնամ-



յակներին, սակայն, հայ բնակչության թիվը համիոյան ջարդերի և արտագաղթի հետևանքով խիստ նվազում է՝ 1914 թ. կազմելով 25-35 տուն:

Գյուղից հարավ-արևմուտք՝ Սբ Խաչ բլրի վրա, գտնվում էր **Թլա** (Թլա-կա) **Սբ Խաչ** հնագույն վանքը (հայտնի էր նաև **Թլա Սբ Նշան**, **Պաղինու Սբ Խաչ** կամ **Ջուխտակ Հայրապետաց** վանք անուններով), որը ճարտարապետական հորինվածքով բավականաչափ հիշեցնում էր Սբ Էջմիածնի տաճարը: Մենաստանից շուրջ 2 կմ հեռավորության վրա գտնվող ապառաժի մեջ փորված 7 գուռերից բխում էր **Յոթնակ աղբյուրը**: Վերջինից սկիզբ առնող նույնանուն գետակը («ջուրը») ոռոգում էր ինչպես վանքի, այնպես էլ Թիլ գյուղի արտերն ու պարտեզները: 19-20-րդ դդ. Սբ Խաչը գտնվում էր **Քաղցրահայաց Սբ Աստվածածին** վանքի հոգևոր իրավասության ներքո: Նրան էին ենթարկվում Աշմուշատի գավառակի **Թիլ**, **Թրխե**, **Նաջարան**, **Պաղին** և **Սրին** գյուղերը: Ընդ որում, 15-րդ դարում նշված բնակավայրերը Տարոնի Սբ Հովհաննես վանքի թեմապատկան գյուղերից էին և հիշվում են վերջինիս 1445 թ. կոնդակում: Սբ Խաչ վանքում մինչև Մեծ եղեռնը գործում էր վանական վարժարան:

#### Օխու (Եղ)

Գտնվում էր քաղաքից 20-25 կմ հյուսիս և **Օխու** կամ **Հիզուլ** գավառակի կենտրոնն էր: Ուներ **Սբ Կարապետ** (Սբ Կիրակոս) անունով եկեղեցի և դպրոց: Գյուղի եկեղեցում պահվում էր ձեռագիր **Ավետարան**: Նշանավոր էր նաև **Օխուի** սրբացված **Ավետարանը** (1676 թ.), որը պահվում էր **Մուրադենց** ընտանիքում, և ողջ Բալուից այստեղ ուխտագնացության էին գալիս ինչպես հայերը, այնպես էլ շրջակա գյուղերի կրոնափոխ եղած բնակիչները («կեսկեսներ»): Հատկանշական է նաև, որ մոտակա **Սարուջան (Սարուճան, Շարուճան)** գյուղի «կեսկեսների» երեխաները հաճախում էին Օխուի հայկական դպրոց: 3 թաղից կազմված գյուղը կառավարում էին առավել ազդեցիկ 4-5 հայկական և «կեսկեսների» տոհմերը, որոնց գլխավորները կոչվում էին **քիյա** (քիյաաղա < քեյյա) կամ **մուխթար** (թրք. muhtar - «գյուղապետ»): Քիյաներին էին պատկանում **Ըղտոր** ձորում գտնվող Օխուի 4 ջրաղացները՝ **Մարգարյանների** (հնագույնը, ավանդաբար՝ «1000 տարուայ»), **Ավտաբոր** (իմա՝ «Ավետաբոր»), **Մուրադենց** (Մուրատենց) և **Մհոյի** (Մուխթար Մհոյի, «կեսկեսների» գյուղապետը): Գյուղի շրջակայքը հարուստ էր աղբյուրներով (**Բազմաղբի** [իմա՝ Բազմաղբյուր], **Էգիստանու Վերի աղբի**, **Վարի աղբի**, **Լուսաղբի**, **Կերմեկյու աղբի** ևն): Շրջակայքում գտնվող **Սբ Գևորգ** և **Սբ Սարգիս Չորավար** ավերակ եկեղեցիները հայտնի ուխտավայրեր էին: Հատկապես նշանավոր էր գյուղից արևելք ընկած **Սբ Գևորգը**, որը նախկինում վանք է եղել: **Օխուի** շրջակայքը հարուստ էր նաև այլ հնավայրերով: Գյուղի արևելյան կող-

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի-թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

մում բարձրացող բլրի վրա, որը պատված էր բռնչի ծառերով, պահպանվել էր **Օխուի՝** քարարկղային թաղումներով հնագույն գերեզմանատունը: Այլուր հանդիպում էին նաև կիսաթաղ կարասներ, անհայտ արձանագրություններով և զարդաքանդակներով պատված քարակոթողներ, մեծ թվով խաչքարեր ևն: Որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում գյուղից հյուսիս գտնվող **Սարուջան** կամ **Խուրուճան** լեռան (թրք. Korucadaği) հարավարևմտյան ստորոտին՝ **Քուլունդերե** վայրում գտնվող **Վերանշեհիրը**, որտեղ, ինչպես ցույց է տալիս տեղանունը, նախկինում բնակավայր է եղել (թրք. Viranşehir - «ավեր քաղաք»): Սարուջանից հյուսիս՝ լեռնային վայրում, նշմարվում էին բերդի և **Սր Ստեփաննոս Նախավկա** եկեղեցու ավերակները: Օխուից արևելք՝ **Սուզեմերան** կամ **Սուզեմիր** լեռան վրա (տեղանունը դնիկերեն ստուգաբանվում է «օձերի բույն», թրք. Sökemirandaği) նույնպես հանդիպում էին բազմաթիվ ավերակներ, անվերժանելի արձանագրություններով հսկա քարակոթողներ, որոնց մի մասը կանգուն է (**Թիքմեթաշ** և **Փայալըք** կամ **Քայալըք** վայրերում): **Սուզեմերանը** պատված էր հսկա կաղնիներով (մեջընդմեջ հանդիպում էին նաև պողատու ծառեր): Չի բացառվում, որ հեթանոսության շրջանում այստեղ գուշակատներ են եղել: **Օխու** գյուղը («գիւղն Ախվա») եղել է գրչության կենտրոն, որտեղ ընդօրինակվել են ձեռագիր մատյաններ:

Բալուի գավառի բնակավայրերը

	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԵԿԵՂԵՑԻ	ԴՊՐՈՑ	ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ
1	Ադփունար (Ակփինար)			
2	Աշնգեղ (Աշունգեղ, Ամարաթ, թրք. Imaret)			Բալուի որոշ ունևոր ընտանիքների ( <b>Խոշմաթյաններ</b> , <b>Սեռֆենք</b> կամ <b>Պոզյաններ</b> ևն) ամառանոց-ազարակն էր: Հարուստ էր այգիներով և պարտեզներով: Կենտրոնում գտնվում էր սրբատաշ քարերով պատրաստված ջրավազան: <b>Աշնգեղից</b> մի փոքր հարավ-արևմուտք <b>Մատաբաց</b> կամ <b>Մատոբաց</b> (օտար. Mertebaj) երբեմնի հայաբնակ գյուղն էր: Նմանատիպ մեկ այլ

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Գարի, թիվ 2 (70), ամսիկ-հունիս, 2020

				բնակավայր՝ <b>Հնգվաթը</b> (Hüngivət, հավանաբար քրդ. hüngiv - հյր. «մեղր») բառից, իմա՝ Մեղրուտ), ընկած էր Աշնգեղի արևելյան կողմում բարձրացող <b>Միատուն</b> լեռնագագաթի ստորոտին:
3	Ապրանք	Սբ Աստվածածին	1	Շրջակայքում պահպանվել էին եկեղեցու և բերդերի ավերակներ, խաչքարեր ևն:
4	Ավլավու (Ավլաղու)	Սբ Կարապետ		
5	Արթխան (Արդղան)	Սբ Մինաս	1	Մոտակայքում պահպանվել էին <b>Սբ Թովմաս</b> եկեղեցու ավերակները: <b>Արթխանից</b> շուրջ 5 կմ հյուսիս-արևմուտք՝ Արածանու աջ ճյուղը համարվող <b>Բերի</b> գետի ձախափնյա <b>Լողմար</b> (Loğmar) երբեմնի հայաբնակ գյուղում, պահպանվել էին 3 եկեղեցիների ավերակներ, խաչքարեր:
6	Արմջան (Արմճան, Արմունճա, թրք. Yarımca կամ Yeniköy)	Սբ Սարգիս	1	Գյուղից հյուսիս նշմարվում էին եկեղեցու ավերակներ:
7	Բաշարաթ (Պաշարաթ)	Սբ Աստվածածին		
8	Գյուլիշկեր (Կյուլիշկեր, Կյուլիչկեր)	Սբ Խաչ	1	
9	Գյումբաթ (Գմբեթ)	Սբ Աստվածածին	1	Մոտակա բարձունքին պահպանվել էին հնագույն ամրոցի հիմքերը: Գյուղից արևելք <b>Սբ Ավետման</b> եկեղեցու ավերակներն էին: Գյումբաթի շրջակայքում կային ավերակ մեկ այլ բնակատեղի (նշմարվում էր գերեզմանոցը) և եկեղեցի:
10	Դավաջի (Տևեճի)	Սբ Պողոս (Սբ Նիկողայոս)		Մոտակայքում պահպանվել էին եկեղեցու ավերակներ:

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) փարի. թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

11	Դավթի մեզրե (Դավթի մրգա, Դավտիկ)	Սբ Կիրակոս		Պահպանվել էին 2 ավերակ եկեղեցիներ, որոնցից մեկը կոչվում էր <b>Սբ Սարգիս:</b>
12	Դեմիրջի (Տեմրճի)			
13	Դիլիմիլի (Տիլիմիլի)	եկեղեցի		
14	Թեփե (Թեփերաշի, Բլուր)	Սբ Մինաս (Սբ Թովմաս ('))	1	Գյուղի՝ ինքնատիպ ճարտարապետությամբ եկեղեցին 19-րդ դարի 1-ին քառորդին կառուցել է Քրիի գավառի (Էրզրումի վիլայեթ) Չանախչի գյուղի բնակիչ, շինարար <b>Չատուր</b> (Ծատուր) <b>Ամիրխանյանը</b> (ծնվ. 1785 թ.), ինչի համար վերջինիս անունը արձանագրվել էր Սբ Մինասի պատին: 2. Ամիրխանյանն էր կառուցել նաև հայրենի գավառի Չանախչի և Ճալոթ գյուղերի եկեղեցիները, նորոգել Բալու քաղաքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Արածանու հայտնի կամուրջը ևն: Գյուղի շրջակայքում պահպանվել էին 7 եկեղեցիների ավերակներ, այլևայլ ուխտավայրեր: Որոշ տվյալներով՝ 1880-ական թթ. գյուղն ուներ 160 տուն հայ բնակչություն:
15	Թրխե (Թռխե, Թլխե)	Սբ Սարգիս	1	Ըստ ժողովրդական ավանդագրույցի՝ եկեղեցին հիմնել է սբ Թադևոս Առաքյալը: Սբ Սարգիսը հնագույն սրբավայր էր, ուր ուխտի էին գնում նաև հարևան գավառներից: Թրխեն հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում:
	Իսաբեկ	Սբ Գևորգ	1	Շրջակայքում պահ-

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

16				պանվել էին եկեղեցու ավերակներ:
17	Իսնիս			
18	Իսանառ (Իսանար, Կանառ)	Սբ Աստվածածին		Շրջակայքում նշմարվում էին եկեղեցու ավերակներ, ուր ուխտի էին գնում նաև օտարները:
19	Իսանառի մեզրե (Իսանարի մրգա)			
20	Իսամբշլի, Ղամիշլուք (Եղեգնուտ)	Սբ Գևորգ		
21	Իսարաբյորք (Իսարաբովք)	Սբ Աստվածածին		Պահպանվել էին 2 ավերակ եկեղեցիներ:
22	Իսարագելիկ (Իսարակելուկ, Իսարակերիկ)	Սբ Աստվածածին (Սբ Խաչ)	1	
23	Իսարագեղիկ (Ղարակետուկ)			
24	Իսարախայա			
25	Իռշմաթ (Իռշմատ)	Տիրամայր Սբ Աստվածածին	1	Գտնվում էր <b>Ճղեսար</b> լեռնագագաթի ստորոտին՝ <b>Խորոտիկ</b> տեղավայրում: Ականատեսների վկայությամբ՝ ինքնատիպ ճարտարապետությամբ կառուցված եկեղեցին ուներ ոսկեգոծ գմբեթ: Ավանդագրույցի համաձայն՝ Սբ Աստվածածին եկեղեցին նույնպես հիմնել է սբ Թադևոսը: Շրջակայքում պահպանվել էին 2 ավերակ եկեղեցիներ, որոնցից մեկը կոչվում էր <b>Սբ Նշան</b> : Խռշմաթը Բայուի առավել բազմամարդ գյուղերից էր: 1914 թ. ուներ 170 տուն կամ մոտ 1400 հայ բնակիչ (1878 թ.: 1500 հայ բնակիչ):
26	Կրպոյի մեզրե (Կրպո մրգա, Կրբոցիք)			
	Հազարգոմ	Սբ Սարգիս	1	

Վեբ համահայկական հանդես, ժԲ (ԺԸ) փարի. թիվ 2 (70), ասորի-հունիս, 2020

27	(Հալալգոմ)			
28	Ղամբարշեյխ (Խեմբերշեյխ, Խամպաշեյխ)			
29	Մրջման (Մրջումնա) մեզրե (Մրջոն մրգա, Մրջյունիկ, թրք. Karınca mezreasi կամ Karıncaköy)	Սբ Գևորգ	1	Գյուղում կար ևս մեկ ավերակ եկեղեցի՝ <b>Սբ Սարգիս</b> անունով: Մոտակա <b>Խոռոչներ</b> (թրք. <b>Խոռոչնի</b> ) վայրից բխող գետակի ջուրն օգտագործվում էր շրջակա գյուղերի արտերը ոռոգելու և ջրաղացները բանեցնելու համար:
30	Նըբշի (Նպըշի)	Սբ Կարապետ	1	Մոտակայքում գտնվում էր <b>Սբ Պողոս</b> վանքը, որը 19-րդ դարում հիմնահատակ կործանված էր: Պահպանվել էր համանուն աղբյուրը, որի քարերի արձանագրությունները ժամանակի ընթացքում եղծվել էին՝ դառնալով անընթեռնելի: Սբ Պողոսի աղբյուրն ուխտավայր էր ինչպես հայերի, այնպես էլ օտարների համար:
31	Նորգեղ	Սբ Կարապետ	1	Հին գյուղատեղիում՝ <b>Հայգեղում</b> , նշմարվում էին 2 ավերակ եկեղեցիներ, որոնցից մեկը կոչվում էր <b>Սբ Տիրամայր</b> : Գյուղի մոտակայքում գտնվում էր արհեստական բլուր (թիվ կամ թել):
32	Նորգեղի մեզրե (մրգա)	Սբ Հակոբ	1	
33	Նորշնակ (Նորշինակ, թրք. Noşnek)			
34	Շինազ (Շնազ, Չինազ)	Սբ Հակոբ	1	Մոտակայքում գտնվում էր <b>Բագուկ</b> կամ <b>Ճամիրամ</b> արհեստական բլուրը (թիվ կամ թել):
35	Ուզունօբա (Ուզունովա)	Սբ Աստվածածին	2	Գյուղից արևմուտք՝ ձորափին, պահպանվել էին 2 եկեղեցու ավերակներ, որոնցից մեկը կոչ-

Վեմ համահայկական հանդես, ժԲ (ԺԸ) Գարի. թիվ 2 (70), ամբի-հունիս, 2020

				վում էր <b>Սբ Փրկիչ</b> : Ուզունօրայում կար նաև բողոքական համայնք, որն ուներ ժողովարան և դպրոց:
36	Ուզունօրայի մեզրե (մրգա)	Սբ Սարգիս		
37	Չայիրի մեզրե (մրգա)	Սբ Խաչ	1	Գյուղում կար ևս մեկ ավերակ եկեղեցի:
38	Ջանիկ (Ճանիկ)			
39	Սագրաթ (Սաքրաթ)	Սբ Թորոս (Սբ Թեոդորոս)	1	Եկեղեցու ներսում բխում էր քաղցրահամ աղբյուր:
40	Սղամ	Սբ Խաչ	1	Ժողովրդական ստուգաբանությամբ՝ գյուղի անունն առաջացել է Երուսաղեմի աղնատումից (ի դեպ, միջնադարյան ձեռագրերում Երուսաղեմը կոչվել է նաև <b>Սաղիմ</b> ): Գյուղի մոտակա <b>Դար</b> բլրի գագաթին գտնվում էր <b>Սբ Կարապետ</b> ավերակ վանքը: Ավանդության համաձայն՝ սրբավայրը նախապես որպես մատուռ հիմնվել է սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից: Գյուղի մոտակայքում բարձրանում էր արիեստական մի բլուր (թիվ կամ թեյ): Սղամից շուրջ 2 կմ հարավ՝ Արամանու աջ ափին՝ երբեմնի հայաբնակ <b>Սեյդիլար</b> (թրք. Seyitli) գյուղի շրջակա ավերակներում, երևում էին վիմափոր փոսեր, որոնք հայտնի էին <b>Սեյդիլար օջախներ</b> անունով: Դրանք հավասարապես պաշտելի ուխտատեղի էին ինչպես հայերի, այնպես էլ դմիլիկների ու քրդերի համար: Ավան-

Վեմ համահայկական հանդես, ժԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ամիլի-հունիս, 2020

				դաբար այդ փոսերը համարվել են ատրուշանի մնացորդներ ( <b>Մեյդիլար</b> տեղանունը ստուգաբանվում է թրք. Seyit - «քուրմ» բառով, իմա՝ <b>Քուրմը</b> ):
41	Սրին (Ցիսին)	Սր Աստվածածին	1	Մոտակայքում կարևու մեկ ավերակ եկեղեցի: Հիշատակվում է Տարոնի Սր Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում <b>Ցը-խին</b> (< Ցիսին) անունով:
42	Քարնձոր (Գարնձոր)			
43	Քենգեռլի (Քյանգյառլու)	Սր Աստվածածին (Սր Թովմաս)	1	
44	Քյուրդիկան (Քյուրդիքան)			
45	Ֆարխտ			

Վեյ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ամիլ-հունիս, 2020

ԾՆԹ.: Մ. Տերոյանի տվյալներով՝ 19-րդ դ. սկզբին Բալուի գավառի 253 գյուղերից 120-ը զուտ հայաբնակ էին, իսկ 133-ը՝ խառնաբնակ:

Հավելված. Բալուի գավառի երբեմնի հայկական բնակավայրերը

**Աշմուշատ** - Բալքայա կամ Մեղրաբերդ, Բահրո, Գոմա (Կոմա կամ Գոմեր), Դաշտակ (թրք. Taştak), Դոլուք (Տոլուք, թրք. Dölek), Եղեգի (Ներքին), Լիսգոմ, Խարաբա (Խարաբեք, պատմ. Արշամաշատ), Հարփունք (Հարբունք), Պոկս (Բոքս, թրք. Boks, հմմտ. պատմական Սյունիքի Մոդք գավառի նույնանուն գյուղը), Ջրափ (թրք. Çırap), Վանք (Գեղվանք կամ Գերվանք, թրք. Gezenk), Վանք (Վանքվանք կամ Կոնկուվանք, թրք. Fankfank), Վասանք (Հոսանք), Վերին Վարդենիկ (Վարթանիկ, Սր Սարգիս ավերակ եկեղեցի, ուխտատեղի էր), Ներքին (Վարդենիկ (2 ավերակ եկեղեցի)<sup>94</sup>:

**Գյոթղերե** - Արդուրուք (Էրդերուկ), Բանագուն (Բահադուն), Չովեր (Ծովեր Վ. և Ն., թրք. Büyüç Ziver և Küçük Ziver), Խոտեկ (Աթիկ), Խոր (Հոր), Մարսոտ (թրք. Sersot), Տանձուտ (թրք. Tanzut), Փուլ:

**Կարաբեքյան (Խարաբեգյան)** - Գահար (Գոհար (՞), թրք. Gehar), Գեյթ

94 1880-ական թթ. վերոհիշյալ գյուղերի մի մասը (Ն. Եղեգի, Վ. և Ն. Վարդենիկ, Վանքվանք ևն) միացվել են հարևան Խարբերդի վիլայեթին:



(Դայթ = Կիթ, թրք. Geyt Բալուի գավառի բնակավայրերը հմնտ. Ճապաղջրի համանուն գյուղը)<sup>95</sup>, Թիլ, Միրվան (Միարվան < Միհրավան), Յարըմդաշտ (Գյարիմդաշտ, թրք. Gerimtaş), Միմսարգիս (< Սուրբ Սարգիս, թրք. Simserkis):

**Հուն** - Ագրակ, Խարասպիկ (՝) (թրք. Haraspik), Հուն կամ Հոն (թրք. Hon), Սարաչոր (Սարաջուր), Սողանա (Սեղանա), Վասնիկ (Հասնուկ < Հոսանք (՝)):

**Մագրվաթ և Կարաչոր** (Խարաչոր) - Առվան (թրք. Kirva (՝), մոտակայքում՝ ավերակ Սբ Քառասուն մանկանց վանք), Ասգեղ (թրք. Askig), Բախշիշ (ավերակ վանք՝ Սբ Սարգիս), Դողիկ (Թոթիկ կամ Թաթիկ, նախկին գյուղատեղիում՝ 2 եկեղեցիների և ամրոցի ավերակներ), Լողմար (3 ավերակ եկեղեցիներ, խաչքարեր), Հնգվաթ, Մատաբաց (Մատնբաց), Պիսթեկ (Բեսթեկ կամ Պեսոյանք, մոտակայքում՝ 2 ավերակ եկեղեցի), Սեյդիլար (Քուրմք), Քարոր (Քառոռ), Քուրմ (թրք. Kürüm), Քիլիս (ավերակ եկեղեցի):

**Ոշին** - Ալիրտուն, Արգաթ (Երկաթ), Գեդակ (Գեսակ, թրք. Gedek), Գրոդ (Կրոո, թրք. Girdo), Խնձորեկ, Կովրան, Ճարո (Ճառո, թրք. Caro, հայտնի էր բուժիչ Քոսաղբյուրով), Մեման (Մեհման), Սահման, Օշին (Վոշին, թրք. Veşin):

**Սիվան** (Սևան) - Ավնիկ կամ Ազըվնիկ (Սևան)<sup>96</sup>, Արդակ (< Անդակ), Խաչաղբյուր (թրք. Haşbur)<sup>97</sup>, Ծմակ (թրք. Zimak), Ծմլակ (թրք. Zimlak), Հափձոր (<Ափձոր (՝), թրք. Hepsor), Համակ կամ Հեմեք (2-ն էին, թրք. Hemek և Yukarı [իմա՝ Վերին] Hemek ), Հունիա (Hünyan, քրդ. «հույներ», իմա՝ երբեմնի քաղկեդոնական հայեր), Մատրակ, Ռըզվան (< Երիզվան), Սոսին (Սոսի), Վաթրագոմ (<Վարդագոմ, թրք. Fatrakum), Վիչկաչուր (<Վիճկաչուր, թրք. Viçküçür), Զյարան (< Զարհանք (՝), թրք. Kârran):

**Օխու** (Հիզոլ) և **Բուլանուխ** - Բաղչեջիկ (Բախչաջուղ), Գուռան, Դլըբան, Դողիկ (Թոթիկ), Թիրիքան, Ինկիճան, Լախան, Լախուտ, Խարիկ, Խորան, Կալեջիկ (Խալաջուղ), Ճըպըռ (Ճըպուռ), Սուրուտ, Նորբերդ (թրք. Norpirt), Ծինան (Շեյնան), Սարուջան, Սևքար կամ Սևքար բարա (թրք. Sefkâr), Սըֆրան, Սիրան, Վերանշեհիր, Քուլունդերե, Օխչիան:

## ԱՐԴԱՆԱ-ՄԱԴԵՆԻ ՍԱՆՋԱԿ

### 5.Մադենի գավառ

Գրավում էր Արևմտյան Տիգրիս (միջնադարյան հայկական աղբյուրներում՝ նաև Դիկաթ, այժմ՝ Dicle) գետի վերին, ինչպես նաև վերջինիս ձախա-

95 Հմնտ. նաև պատմ. Ծովքի Հաշտյանք գավառի Կիթ+առիճ բերդը:

96 Հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. հայտնի կոնդակում որպես «ողեակն (իմա՝ բերդաքաղաք - Գ. Բ.) Սեան»: Վերջինիս անունով շրջակա 2 տասնյակից ավելի գյուղերից կազմված գավառակը նույնպես կոչվում էր Սևան կամ Սիվան, իսկ Հայկական Տավրոսի լեռնաճյուղը՝ Սևան-Մադենի լեռներ:

97 Որպես հայաբնակ գյուղ հիշատակում է Ղ. Ինձիճյանը Սբ Լուսավորիչ եկեղեցիով (տես **Ինձիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 225):

կողմյան ճյուղը հանդիսացող **Գբնիի** (Չիբենե, հնագույն Subnat) միջին ավազանները: Հյուսիսից Հայկական Տավրոսի արևմտյան լեռնաշարով սահմանակից էր **Բալուի**, արևելքից՝ **Լըճեի** և **Սլիվանի**, հարավից՝ **Դիարբեքիի** և **Ջերմուկի** (Չերմիկ) գավառներին, իսկ արևմուտքից՝ Խարբերդի վիլայեթին: Նախապես Մադենի գավառի տարածքում գոյություն ուներ 2 վարչամիավոր՝ **Արդնիի** սանջակը կամ լիվան (թրք. Ergani, հայկ. աղբյուրներում՝ «**գաւառն Արդնոյ**» կամ «**Արդնոյ գաւառ**») և **Ակլի** (թրք. Eğil) հուքյումերը: Նկատի ունենալով երկրամասի հանքային հարուստ ընդերքը (պղինձ, նաև ոսկի, արծաթ ևն)՝ Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի սկզբին նշված վարչամիավորները ժամանակավորապես միավորեց Hudut-ı Madenemini (բառացի՝ «հանքերի կառավարչի սահման») անունը կրող մարզի մեջ<sup>98</sup>: 1840-ական թթ. վերջից Արդնին և Ակլը կազմեցին միասնական՝ Մադենի (Արդանա-Մադեն) գավառը, որը մինչև 1880-ական թթ. կեսը մերթընդմերթ եղել է Խարբերդի (1867 թվականից՝ Մամուրեթ-ուլ-Ազիզ) կամ Դիարբեքիի վիլայեթների կազմում: 1885 թ. վարչամիավորը սանջակի կարգավիճակով վերջնականապես անցավ Դիարբեքիի վիլայեթին<sup>99</sup>: Գավառի, միաժամանակ Արդանա-Մադենի սանջակի կենտրոնը Դիարբեքիից շուրջ 70 կմ հյուսիս-արևմուտք՝ Արևմտյան Տիգրիսի ափին գտնվող **Մադեն** կամ **Մադան** (Արդնո մադեն, թրք. Pakir Maden) գյուղաքաղաքն էր, որը ձևավորվել էր հնագույն պղնձահանքերի հարևանությամբ 17-րդ դարի կեսերին: Ընդ որում, վերջինիս առաջին բնակիչներն այլևայլ վայրերից այստեղ հաստատված հայերն ու հույներն էին<sup>100</sup>: Ավելի ուշ Մադենում բնակություն հաստատեցին նաև որոշ թվով դմիլիկներ և թուրք պաշտոնյաներ: Գյուղաքաղաքը **Մեհրաբի ձորով** («Մեհրապ տերեսի») բաժանված էր 2 հիմնական՝ հայկական և հունական թաղամասերի: Դիարբեքիի առաջնորդարանի վիճակագրության տվյալներով՝ Մադենը 1914 թ. ուներ 3300 հայ բնակիչ<sup>101</sup>: Գործում էին **Սբ Աստվածածին** և **Սբ Սարգիս** եկեղեցիները, 2 հայկական դպրոց: Եկեղեցի ունեին նաև հույները, որոնք Առաջին աշխարհամարտի նախօրյակին կազմում էին 200 տուն<sup>102</sup>:

Միջնադարում Մադենի գավառը (պատմ. Անգեղ տուն կամ Քաղ [Քեղ]) համատարած հայաբնակ էր: Մակայն տարբեր ավազակախմբերի ավարառության, անապահով վիճակի և համաճարակների պատճառով գավառի հայ բնակչության զգալի մասը ցրվել էր, իսկ տասնյակ գյուղեր և ավաններ ամայացել կամ դարձել էին այլազգաբնակ: 20-րդ դարի սկզբին Մադենի գավառը

98 Վերոհիշյալ մարզն ընդգրկում էր նաև Ջերմուկի (Չերմիք) և Խարբերդի գավառները (տե՛ս նույն տեղում, էջ 211, 223, 236): Ի դեպ, այն կոչվել է նաև Keban Madeni Nezaleti (տե՛ս **Sezen T.**, Osmanlı yer adları, Ankara, 2017, էջ 332):

99 Տե՛ս նույն տեղում, էջ 521:

100 Տվյալները՝ ըստ **Ղ. Ինճիճյանի** (նշվ. աշխ., էջ 234-236, 242): Ի դեպ, Մադենում զգալի թվով հայկական ընտանիքներ էին հաստատվել նշանավոր **Չնքուշ** (Շենքուշ կամ Շնքուշ) գյուղաքաղաքից (տե՛ս **Գեղղեան Գ.**, Չնքուշապատում: Քննական պատմություն հայոց Չնքուշի, հատ. Ա, Երուսաղեմ, 1970, էջ 84):

101 Տե՛ս **Raymond H. Kévorkian**, նշվ. աշխ., էջ 278, հմմտ. **Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian**, նշվ. աշխ., էջ 404:

102 Տե՛ս "Diary of Major E. Noel", էջ 15:

ռում հայերը հանդիպում էին առանձին բնակավայրերում, որոնցից առավել բազմամարդ էին **Արդնի** գյուղաքաղաքը և **Ակլ** ավանը:

**Արդնին** (պատմ. Արկնի) ընկած էր Մաղենից շուրջ 20 կմ հարավ-արևելք՝ **Արկնոբերդ** լեռան ստորոտին: Վերջինիս գագաթին գտնվում էր հնագույն **Արկնի** ամրոցը (19-րդ դարի վերջին ավերակները դեռ պահպանվում էին), որի անունը, ժամանակի ընթացքում աղավաղվելով, դարձել էր **Արդնի** կամ **Արդանա**: 11-րդ դարի կեսերին բերդը **Թլխում** գավառի կենտրոնն էր, հայազգի իշխան **Հարպիկի** և նրա 3 եղբայրների նստավայրը: Մակայն բյուզանդական իշխանությունների դավադրությունների, այնուհետև սելջուկյան արշավանքների հետևանքով **Արկնին** ավերվեց և ամայացավ: 17-րդ դարում, երբ շրջակա հայաբնակ գյուղերը զանազան ավազակախմբերի պարբերաբար կրկնվող ասպատակությունների հետևանքով աստիճանաբար ավերվեցին, տեղի բնակիչները, տեղափոխվելով Արդնի (Արկնի), վերաշինեցին այն: Ուշագրավ է, որ դրանից հետո էլ դեռ երկար ժամանակ, հատկապես եկեղեցական տոներին, տեղում վերահաստատված հայերը շարունակում էին հաճախել իրենց երբեմնի սրբավայրերը (**Սբ Կիրակոս**, **Սբ Եղիաս**, **Սբ Մամաս**, **Սբ Լույս**, **Սբ Աստվածածին** ևն)<sup>103</sup>: Գյուղաքաղաքը կազմված էր 3 թաղերից: Հայաբնակ էին **Վերին** (Ղ. Ինճիճյանի աշխատության մեջ՝ Վերին քաղաք) և **Ներքին** (Ղ. Ինճիճյանի աշխատության մեջ՝ Միջին քաղաք) թաղամասերը, որտեղ և գտնվում էին գյուղաքաղաքի **Սբ Սարգիս** նույնանուն 2՝ Վերին և Ներքին եկեղեցիները: Սրբավայրերում պահվում էին ձեռագրեր: Արդնիում հայտնի էին նաև **Սբ Փրկիչ** (հիշվում է նաև որպես եկեղեցի) և **Գալիլեա** (Գալիլիա) ուխտավայրերը: Արդնին գավառակի (թրք. nahiyeye) կենտրոն էր: Դիարբեքիի առաջնորդարանի տվյալներով՝ գյուղաքաղաքի հայ բնակչության թիվը 1914 թ. 3100 էր<sup>104</sup>: Գյուղաքաղաքում որոշակի ընդհատումներով գործել է 2 հայկական դպրոց: Շրջակա երբեմնի հայկական գյուղերից հայտնի էին **Բակուրը** (Օհանաղբյուր, թրք. Bekirzadeler)<sup>105</sup>, **Ախռները** (թրք. Ahurlar), **Թլխումը**, **Թլղատին**, **Համուկը**, **Հարբաթը** (Հալբաթ, եկեղեցու անունով՝ նաև Սբ Թորոս, թրք. Herbata)<sup>106</sup>, **Հարսնին**, **Հիլարը** (Հիլառ), **Գըռլար-քիլիսան** (եկեղեցու անունով՝ նաև Սբ Եղիա կամ Սբ Եղիաս, թրք. Kirlarkilisesi), **Մալանը** (Մալոն), **Մանդիքանը** կամ **Մալիքանը**, **Վարիգեղը**, **Փափազգեղը** (թրք. «տերտերի տոհմ»), **Քիլավանը** (< Զեղավան (՝), թրք. Külevan) ևն:

103 Տե՛ս **Ինճիճյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 241:

104 Է. Նոյելն Արդնի գյուղաքաղաքում մշում է 7000 հայ բնակիչ (800 տուն) (տե՛ս “Diary of Major E. Noel”, էջ 12): Մակայն, ամենայն հավանականությամբ, տեղեկագրում արձանագրված է ողջ Մաղենի գավառի հայ բնակչությունը: Ի դեպ, հեղինակը գավառի մասին որևէ վիճակագրական տեղեկություն չի հաղորդում:

105 Գյուղում 1434 թ. ձեռագիր է ընդօրինակվել («գրեալ ի գաւառն **Արդնոյ**, ի գիւղն **Քազուր**):

106 Գյուղը հիշատակվում է 17-րդ դ. հիշատակարաններից մեկում. «Ղարծեալ Աստուած որորմի ասացէք .... **Հարպաթու** ժողովրդեանն մեծի և փոքու» («ժէ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1601-1620 թթ.), կազմեցին՝ **Վազգեն Հակոբյան**, **Աշոտ Հովհաննիսյան**, Եր., 1974, էջ 186):

ՎԷՆ ԽԱՆԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՄ, ԺԲ (ԺԸ) ՎՊԱՐԻ, ԹԻՎ 2 (70), ԱՄՊԻԼ-ԻՆՈՒՄԻ, 2020

**Ակլ** (Ակիլ կամ Ակել, պատմ. Անգո) ավանը գտնվում էր Մադենից շուրջ 30 կմ հարավ-արևելք՝ Արևմտյան Տիգրիսի աջ ափին բարձրացող դժվարամատչելի լեռան ս տո ր ո տի կ : **Ակլ-Անգո** Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Անգամ թուրք հնագետների նորագույն ուսումնասիրությունների համաձայն՝ այն հիմնադրվել է Ք. ա. 4-3-րդ հազարամյակների սահմանագլխին: Ակլ-Անգոն Անգեղյա Տորքի (Ներգալ) պաշտամունքի կարևոր կենտրոն էր, Երվանդունիների Ծոփքի թագավորության մայրաքաղաքը: Առանձին ուսումնասիրողների ենթադրության համաձայն՝ բնակավայրը Ք. ա. 2-րդ դ. կեսերին Ծոփքի Արկաթիաս արքայի կողմից բարեկարգվել և վերանվանվել է **Արկաթիակերտ** (աղավաղված՝ **Կարկաթիակերտ**, կոչվել է նաև **Եպիֆանիա**): Ք. հ. 3-4-րդ դդ. Անգոն Ադանիք աշխարհի **Անգեղտուն** գավառի կենտրոնն էր, որտեղ գտնվում էին Արշակունիների դամբարաններն ու Մեծ Հայքի գանձատներից մեկը: Առ այսօր հիմնականում պահպանվել են<sup>107</sup> **Ակլ-Անգո**ի ժայռափոր բերդը՝ հսկա ջրամբարով, երբեմնի վիմափոր տաճար-մեխյանները<sup>108</sup>, ժայռափոր ջրանցքը և քարայրները, հնագույն դամբարանների մնացորդները, այդ թվում՝ մինչև Տիգրիսի գետափի իջնող 177 վիմափոր աստիճաններից կազմված աստիճանաշարը<sup>109</sup> ևն: 16-րդ դ. - 19-րդ դ. 40-ական թթ. Ակլն իշխանապետության (թրք. hünkümet) կենտրոն էր: 1914 թ. **Ակլ-Անգո**ի հայերը կազմում էին 150-200 տուն<sup>110</sup>: Մեծ հռչակ ուներ **Ակլի** (Անկլա) **Սբ Նշան** վիմափոր վանքը, որը գործել է մինչև Մեծ եղեռնը և նշանավոր ուխտավայր էր: Մենաստանում ի պահ էր տրված ժամանակին Խարբերդի Ծովք բնակավայրից այստեղ տեղափոխված **Սբ Խաչը**, որը, ըստ ավանդության, ձուլվել էր այն տաշտակից, որում Աստվածամայրը լողացրել էր մանուկ Հիսուսին: Վանքում, որը միջնադարում հայ ձեռագրական գրչության կենտրոն էր, պահվում էին 7 ձեռագիր մատյաններ: Ավանում գործում էր նաև **Սբ Թագավոր** եկեղեցին: **Ակլի** մերձակայքում պահպանվել էին **Տիրամայր Սբ Աստվածածին** կամ **Անապատ** (միջնադարում՝ գրչության կենտրոն) և **Սբ Թովմաս առաքյալ** մենաստանների ավերակները: Ակլի շրջակայքը ժամանակին համատարած հայաբնակ էր, ինչի ապացույցն առ այսօր հանդիպող հայահունչ տեղանուններն են (**Բոզովան**, **Ռոսթովան**, **Վերին** և **Ներքին Գերգյուվան** (Gergüvan) < **Գերգավան**, **Գորգևան** (Görgevan) < **Գերգավան**, թերևս գյուղական եկեղեցիների անուններով):

Վեյս համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Գարի. թիվ 2 (70), ամբողջ-հունիս, 2020

107 Ներկայումս Արևմտյան Տիգրիսի վրա ջրամբար կառուցելու պատճառով Ակլ-Անգոի որոշ հնավայրեր մասամբ ջրասույգ են եղել:  
 108 Տե՛ս **Սրվանդությանց Գ.**, Երկեր-2, էջ 416, տե՛ս նաև **Ինձիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 223:  
 109 Տե՛ս **Taylor J. G.**, Travels in Kurdistan, with Notices of the Sources of the Eastern and Western Tigris, and Ancient Ruins in Their Neighbourhood. – Journal of the Royal Geographical Society of London, vol. 35, 1865, էջ 36:  
 110 Ղ. Ինձիճեանի տվյալներով՝ 17-րդ դ. կեսերին Ակլն ավելի բազմամարդ է եղել (միայն հայերը՝ 250 տուն): Սակայն հետագա տարիներին սովի և համաճարակների պատճառով ավանի բնակչությունը խիստ նվազել է (տե՛ս **Ինձիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 223):

Մադենի գավառի տարածքում էր **Բարձրահայաց (Բարձր) Սր Աստվածածին**<sup>111</sup> հոռակավոր մենաստանը (Արդնո վանք): Վերջինս կառուցված էր **Արկզնոբերդ** լեռան գագաթին՝ վերոհիշյալ **Արկնի** (Արդնի) բերդին կից: Ավանդության համաձայն՝ այս վայրում մատուռ էր հիմնել դեռ սբ Թադևոս առաքյալը: 1434 թ. Ամիդի կամ Տիգրանակերտի (Դիարբեքիր) և Միջագետքի հայոց հոգևոր առաջնորդ, նշանավոր տաղերգու, նկարիչ **Մկրտիչ Նաղաշն** Ադձնիքի ավերված Միաֆարկին կամ Մուփարդին (պատմ. Նփրկերտ) քաղաքից այստեղ տեղափոխեց մեծաթիվ մասունքներ ու սրբություններ՝ երբեմնի մատուռի տեղում հիմնելով մենաստան: **Բարձրահայաց Սր Աստվածածինն** ավելի ընդարձակվեց 17-րդ դ. 40-ական թթ. վերջին վանահայր **Եղիազար Այնթապցու** կողմից (1681-1691 թթ. Ամենայն հայոց կաթողիկոս), ով տեղում միաբանություն հաստատեց՝ ծավալելով մշակութային և լուսավորական լայն գործունեություն: Դրա շնորհիվ մենաստանը կարճ ժամանակամիջոցում վերածվեց հայ կյանքի երևելի կենտրոնի: 17-րդ դ. 2-րդ կեսից մինչև 19-րդ դ. վերջը վանքի բարգավաճմանը մեծ նպաստ բերեցին նաև վանահայրեր **Հովհաննես** (Հովհան) վարդապետ **Արդնցին**, **Մինաս** վարդապետը, **Կարապետ** եպիսկոպոս **Սասունցին** (Սասնեցի), **Սահակ** եպիսկոպոս **Ամթեցին** («տեսուչ Ամթայ և սուրբ ուխտիս»), **Հովհաննես** վարդապետ **Գյումուշխանեցին** և **Հովհաննես** վարդապետ **Տեր-Պողոսյանը**: Սկզբնապես **Բարձրահայաց Սր Աստվածածինը** Տիգրանակերտի կամ Դիարբեքիրի առաջնորդական տեղապահի ամառային նստավայրն էր, բայց 18-րդ դ. վերջից դարձավ առանձին թեմի («վանական վիճակ») առաջնորդանիստ: Մինչև Մեծ եղեռնը մենաստանը նշանավոր ուխտավայր էր (վանքի այցելուների համար կառուցված էին շուրջ 50 կացարաններ): Վանքի գլխավոր խորանի սեղանին դրված էր մանուկ Հիսուսին գրկած Աստվածամոր սրբապատկերը: Ըստ պահպանված տեղեկությունների՝ վերջինս 17-րդ դարում Կ. Պոլսից Մադեն (Արդանա) էր տեղափոխել Եղիազար Այնթապցին: 1787 թ. տեղի հայ համայնքի նախաձեռնությամբ այն ի պահ էր տրվել **Բարձրահայաց Սր Աստվածածնում**: Հատկանշական է, որ Սր Աստվածածնի հիշյալ սրբապատկերին ուխտի էին գալիս նաև Արդանայի հույները, որոնք համոզված էին, որ այն **Ղուկաս ավետարանիչի** ստեղծագործությունն է: **Բարձրահայաց Սր Աստվածածինը** հայ գրչության նշանավոր կենտրոն էր, որտեղ ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Վանքի մատենադարանում պահվում էին նաև շուրջ 150 մատյաններ և մեծաթիվ տպագիր գրքեր: Գտնվելով բարձրադիր վայրում՝ մենաստանը հաճախ ենթարկվել է կայծակնահարության և հրդեհների: Այդ պատճառով 1757 թ.՝

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ամբողջ-հունիս, 2020

111 Ուշագրավ է, որ նույն անունն է կրել նաև Ուրֆայի (Եդեսիա) եկեղեցիներից մեկը (նաև «Բարձրահայաց Տիրամայր Սր Աստուածածին» հիմնարկետան յառաքելոյն Թադէոսէ») (տես **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 184-185):

**Կարապետ** վարդապետ **Աճեմյանի** առաջնորդության ժամանակ, այստեղ տեղադրվել էր հողով լցված արծաթե պատյանով յուրատեսակ շանթարգելկանթեղ, որը կոչվում էր «**արնէ կամ կայծակի ճրագ**»՝ «շաղեալ արեամբ մարտիրոսաց, ի յապահովութիւն տեղույս միաբանիցն ի կայծական», ինչպես նշվում է վանահոր հիշատակագրության մեջ: Վերջինս վառում էին ամպրոպի օրերին:

**Քարձրահայաց Սբ Աստվածածնի** հարևանությամբ գտնվում էր **Զիլֆի փեղամբար** (թրք. Zülfi Peyğamber «գույգ մարգարե») մահմեդական սրբավայրը: Լեռնագագաթի այդ հատվածը հայտնի էր **Ziyaret** անունով (արաբ.՝ «սրբավայր» կամ «ուխտավայր»):

### Մաղենի հայաբնակ գյուղերը

	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԵԿԵՂԵՑԻ	ԴՊՐՈՑ	ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1	Թիլ-Բաղդաղ (Թլբաղդաստ)	Սբ Հակոբ		Գյուղում էր գտնվում <b>Սբ Խաչ</b> ամայի վանքը: Գյուղի հարևանությամբ՝ <b>Կոշկար</b> գետի (Արևմտյան Տիգրիսի վտակը) ճախ ափին, գտնվել է երբեմնի հայաբնակ <b>Ագրակ</b> (Eğrek) գյուղը:
2	Թոփալան	Սբ Գևորգ		
3	Հարրկան (Այպեկա ('))	Սբ Աստվածածին		
4	Հոփակ (Հոփիկ)	Սբ Աստվածածին (Սբ Գևորգ)		
5	Հրեղան	Սբ Աստվածածին		Հիշատակվում է <b>Տարոնի Սբ Հովհաննեսի</b> վանքի 1445 թ. կոնդակում <b>Հրետան</b> ձևով: Գյուղում պահպանվել էին <b>Սբ Հակոբ</b> վանքի ավերակները: Մոտակայքում գտնվել է մեկ այլ՝ <b>Սուլթանըմա</b> կամ <b>Սալթանըմա</b> ավերակ վանքը (ամենայն հավանականությամբ՝ 2 կմ հարավարևելք գտնվող <b>Վանքզոմ</b> գյուղում): <b>Հրեղանի</b> շրջա-

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

				կա բազմաթիվ տեղանուններ խոսում են ժամանակին հոծ հայ բնակչության գոյության մասին՝ <b>Արուսեկ &lt; Արուսյակ, Խաչիկ կամ Խաչեկ, Հասեկ &lt; Հացեկ, Շենգըրիկ (Տingirik), Տոնագրակ (Tonekrek)</b> ևն:
6	Տբնի (Տբնե, Դիբնի, Դպնե)	Սբ Սարգիս	1	<p>Հիշատակվում է <b>Տարոնի Սբ Հովհաննեսի</b> վանքի 1445 թ. կոնդակում <b>Տպնե</b> ձևով: Մոտակայքում գտնվել է <b>Ս. Թովմաս</b> վիմափոր վանքը (<b>Տբնու վանք</b>), որը հայտնի ուխտավայր էր: Գ. Սրվանձադյանցը վերջինս ենթադրաբար նույնացրել է 1310 թ. ընդօրինակված մի Ավետարանի հետագայում կազմված հիշատակարանում հանդիպող <b>Կարմիր խաչի</b> հետ (եկեղեցի կամ վանք): <b>Տբնին</b> հայաբնակ մեծ գյուղ էր՝ ավելի քան 100 գերդաստանով:</p> <p><b>Մարկ Սայքսի</b> տվյալներով՝ տեղի հայերը «ինքնուրույն էին և ունևոր» (“independent and wealthy”): <b>Տբնիի</b> շրջակայքում ևս կային հայահունչ տեղանունները պահած գյուղեր (<b>Բերդուկ, Սևաուվան &lt; Սևան, Թրվան&lt; Տիրվան (՝), Վարդևան կամ Վարդվան, Ուռի</b> ևն):</p>
7	Փայամլի (Փայլամլու, Բայամլի)	Սբ Կարապետ Նախավկա (Սբ Աստվածածին)		Փայամլիի շրջակայքում հանդիպում էին առանձին հայահունչ տեղանուններ, ինչը նույնպես խոսում է ժամանակին այստեղ հայ բնակչության գերակշռության մասին ( <b>Բիրշեն կամ Բերշեն, Վանքուկ</b> ևն):
8	Փիրան, ավան	Սբ Սարգիս (Սբ Աստվածածին)		Մոտ 2 կմ արևելք գտնվում էր <b>Քոմիկ &lt; Գոմք</b> երբեմնի հայաբնակ գյուղը:

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Գարի, թիվ 2 (70), ամբողջ-հունիս, 2020

9	Փրնուսխան (Քրըքխան ('))			
10	Քափլան (Գափլան, Կզրլան ('))	Սբ Կարապետ		

ԾՆԹ.: Մադենի գավառում 1914 թ. գործել է 7 հայկական դպրոց<sup>112</sup> 700 աշակերտով (լրացուցիչ մանրամասները բացակայում են):

**Գեղամ Մ. Բադալյան** - գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայաստանի պատմական աշխարհագրությունը, պատմական ժողովրդագրությունն ու քարտեզագրությունը:

Summary

## THE HISTORICAL-DEMOGRAPHIC IMAGE OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE

Part Tenth: Diyarbekir city and Derik, Savur, Palu and Maden cantons

Gegham M. Badalyan  
*Candidate of Sciences in History*

**Key words** - Diyarbekir city, Derik, Savur, Maden sanjak, Palu canton, Palu city, the Affable Holy Mother of God (Qaghtzrahayatz Surb Astvatsatsin), Arghni borough, Akl (Angh) settlement, the High Holy Mother of God (Bardzrahayatz Surb Astvatsatsin).

The article is dedicated to the study of the pre-genocide demographic situation in the namesake provincial capital of Diyarbekir vilayet, as well as in the cantons of Derik (Diyarbekir sanjak), Savur (Mardin sanjak), Palu and Maden (Arghana-Maden sanjak).

Diyarbekir city – the center of the vilayet, was one of the oldest settlements in Armenia, which is still evidenced in the cuneiform inscriptions of the 2nd millennium B.C. as Amedu or Amedi (in Armenian medieval sources: Amid, Amit or Amdatsuots kaghak (city of the residents of Amid)). The city was located in the

112 Ենթադրելի է, որ այս թվի մեջ ներառված են նաև գավառի քաղաքային բնակավայրերի և Տբնիի դպրոցները:



center of the Diyarbekir plain at the northern foot of the Karajadagh (historical Ashimun) volcanic massif, on the western bank of the Western Tigris, bordered by a meander or “bow” (Arabic: kâfs). Diyarbekir was one of the most populous and Armenian-populated cities in Western Armenia, where the continuous dominance of the Armenian population is noticeable beginning from the 70s and 80s of the 19th century. On the eve of World War I, the number of Armenians in the city’s 55.000-strong multinational population was 26.000-27.500, or 47-50% (according to the comparison of the statistical data by French preacher J. Retoré, Deputy Consul of the Great Britain T. Mkrtichian and Major E. Noel). In this respect, Diyarbekir was second only to the city of Van (about 30.000 people or 66% of the population).

The Armenian population was mainly concentrated in the districts covering the northeastern and southern parts of Diyarbekir, which were formed in the vicinities of the churches of St. Kirakos and St. Sargis. Meanwhile, other Christians in the city (Jacobi and Catholic Assyrians, Kildanis, Greeks – Orthodox and Catholic-Uniates or Melchites) together with Armenians made up 55-60% of the population prior to the genocide. There was also a small Jewish community in the city – about 100 families. The Muslim population making the minority in Diyarbekir was predominantly Turkish, with a large share of Christians converted to Islam in its time (Armenians, Assyrians, Greeks), and significantly Turkified Dimili (Zazans) and Kurds. Moreover, many mosques in Diyarbekir were once Armenian sanctuaries, which were occupied at the very beginning of the establishment of Ottoman rule: St. Astvatsatsin of 60 altars (it was the main mosque of Diyarbekir in the early 20th century called Ulujami), the former Armenian Cathedral of St. Theodoros or St. Toros (the Turks renamed it Jurshunlu Jami), the Holy Trinity, St. Hovhannes (John). Of the ancient structures, the 72-tower wall surrounding Amid-Diyarbekir, which still stands today, was famous. From the Middle Ages, the four main gates (“doors”) symbolizing the Evangelists have been preserved: Armenian or Erzurum (northern, Turkish: Dağkapısı), Mardin (southern), Horomots or Horom door (western, Turkish: Rumkapısı) and New (eastern, Turkish: Yenikapısı or Şatkapısı, meaning “Door of Tigris”). Among the prominent medieval structures were the ancient citadel named Aver Berd (Fortress) (Turkish: Virankalesi), the Roman-era aqueduct-bridge that brought water from Hamrvat (Hamrvar) pouring spring flowing from the northern slopes of Karajadagh to the town, sanctified Chift-Ilja pool full of fish.

To the south of the Western Tigris were the cantons of **Derik** and **Savur**, where Armenians (mostly Catholics), as a rule, lived in administrative centers and in a few villages on the eve of the genocide. This was the result of the Ottoman yoke, as in the mentioned cantons during the 18th-19th centuries forced religious conversion had taken place. The latter had particularly catastrophic consequences in Savur, where over time the local semi-independent Armenian principality had disappeared.

The **canton of Palu**, among semi-independent principalities of the 40s of the 16th-19th (Turkish: hükümet), was one of the most Armenian-populated administrative units in Diyarbekir vilayet. One of the essential features of Palu principality was the existence of Armenian melikdoms. Although they were subject to the **amira**-rulers of Armenian descent from Palu, they enjoyed considerable independence in internal affairs. The melikdoms of Havav, Sarutchan or Okhu, Ashmushat (the region of Arshamashat – the ancient capital of Tsopk), Khamishli (Ghamishluk, Yeghegnut), Paghin were known. In particular, the canton of Ashmushat, on the left bank of the Aratsani, stood out, which was, in fact, a unique federation of separate melik families settled in several settlements. There is also information about the meliks of Khamishli (Ghamishluk) settlement of Javgan canton. Some facts enable us to speak about military cooperations between separate melikdoms and the Dmluk tribes of Dersim. However, the constant fighting against the Muslim (Kurdish and Dmluk or Zaza) feudals, as well as the penetration of new foreign tribes and the intensifying pressure, destroyed once the former power of the meliks of Palu. As a result, mass emigration began from Palu city and villages, which forced large numbers of Armenian families to flee to various places, including Cilicia and even Constantinople.

Moreover, emigration continued throughout the 19th century, with a strong negative impact on the canton's ethnic-tribal image. Instead of the departed Armenians, a large number of Muslims (mostly Dmluks, also Kurds and Turks) migrated from Kharberd, Tchapaghjur and other cantons to the territory of Palu. The widespread Muslimization of Armenians who had converted to Greek confession (Chalcedonianism) still in the Middle Ages reached catastrophic sizes. The apostates in Palu were also known as “keskes” (meaning “half-half” in Armenian). As a result of all this, if at the beginning of the 19th century in Palu canton (including the city- fortress) approximately 60.000-70.000 Armenians and 30.000 “Kurds” lived, then almost a century later the ratio had already changed to the detriment of Armenians, respectively 22.000-24.000 and 60.000-65.000. At the same time, pursuing a traditional policy of separating the Armenian-populated cantons, the Ottoman authorities transferred Balu canton of Arghana-Maden sanjak from Kharberd vilayet or Mamuret-ul-Aziz to Diyarbekir vilayet, which remained there until the end of World War I.

It is noteworthy, however, that the inner canton-nahiyes formed in the Middle Ages were preserved in the territory of the canton: Ashmushat (<Arshamashat), Bulanukh (Upper and Lower), Gyokdere, Karabekyan (Kharabegyan), Karachor (Kharachor), Central or Mazrvat (Mazrut, <Arab.: Mâzr'âat - مزراعة, literally “mezrehes”) with Javgan, Houn (Sarachor), Voshin (Oshin or Veshin), Sivan (<Sevan), Okhu or Yegh (Hizol). Nevertheless, on the eve of the Armenian Genocide, Palu canton was one of the most Armenian-populated administrative units in Diyarbekir vilayet, where according to the British data, before the genocide, the

number of the Armenian population, including the city, was about 26.000. Until the 70s of the 19th century, the number of churches in Palu city had four Armenian districts: Yerevan (St. Gregory the Illuminator Church, Katoghike or Mother Church), Toner (St. Astvatsatsin Church), St. Sahak (St. Sahak Partev Church) and St. Kirakos (with the namesake church). Despite the unfavorable demographic conditions, as a result of which St. Sahak and St. Kirakos districts almost completely deserted and uninhabited already in the 80s of the 19th century, over 6.000 Armenians (about half of the population) lived in Palu city on the eve of the Armenian Genocide. The villages and settlements of Havav, Dzet, Najaran, Nekhri (Nerkhi), Paghin, Til, Okhu (Yegh), Tepe (Blur) and Khoshmat were also notable for their populousness.

As for **Maden canton**, though the Armenian population was presented in separate islands (enclave), such as Maden or (Arghno Maden) and Arghni boroughs, Akl (Angh) settlement and a number of village, Armenian traces were preserved in many settlements of the administrative unit (churches, Armenian cemeteries, places of pilgrimage). The monastery of the Most High St. Astvatsatsin (Arghno Monastery) was renowned.

Резюме

## ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКИЙ ОБЛИК ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН

Часть десятая. Город Диарбекир и провинции Дерик,  
Савур, Балу и Маден

Гегам М. Бадалян  
*Канд. ист. наук*

**Ключевые слова** - город Диарбекир, Дерик, Савур, Маденский санджак, провинция Балу, город Балу, церковь Благодосклонной Св. Богородицы, сельский город Аргни, поселок Акл (Ангх), монастырь Превысокой Св. Богородицы.

Статья посвящена изучению предгеноцидного историко-демографического облика губернского центра Диарбекирского вилайета, а также Дерика (Диарбекирский санджак), Савура (Мардинский санджак) и провинций Балу и Маден (Аргана-Маденский санджак).

Центр вилайета - город Диарбекир - одно из древнейших армянских поселений, которое упоминается еще в клинописных надписях 2-го тысячелетия до н. э. под названием Amedu или Amedi (в средневековых армянских источ-

никах - Амид, Амит, город амидцев). Город находился на западном берегу Западного Тигра, около изгиба или «дуги» (араб. kâfs) реки, в центре Диарбекирской долины, простирающейся на северном подножии вулканического горного массива Караджадаг (ист. Ашимун). Диарбекир был одним из наиболее многолюдных городов с большой численностью армянского населения, непрерывное доминирование которой заметно начиная с 70-80-х годов 19-го века. Накануне Первой мировой войны в многонациональном населении города, достигающем 55000, число армян составляло 26000-27500 человек или 47-50 % (согласно совмещению статистических данных французского проповедника Ж. Реторе, вице-консула Великобритании Т. Мкртчяна и майора Э. Ноэля). В этом отношении Диарбекир уступал лишь Вану (около 30000 человек или 66 % населения). Армянское население было сконцентрировано в северо-восточных и южных кварталах, которые образовались вокруг церкви Св. Киракос и Св. Саргис. Причем другие христиане города (ассирийцы - яковиты и католики, халдеи, греки – православные и католики-униаты или мелькиты) вместе с армянами вплоть до геноцида составляли 55-60 % населения. В городе была также малочисленная еврейская община - около 100 семей. Мусульманское население города, составляющее меньшинство, состояло из турок, среди которых христиане, в свое время принявшие ислам (армяне, ассирийцы, греки) имели большой удельный вес, а также из отуреченных дымли (заза) и курдов. Более того, многие мечети Диарбекира были прежними армянскими святынями, насильно присвоенными в самом начале установления османского господства: 60-ризничная церковь Св. Богородицы (в начале 20-го века была главной мечетью Диарбекира - Улуджами), бывший армянский Кафедральный собор Св. Феодора или Тороса (турки переименовали в Гуршунлу джами), церкви Св. Троицы, Св. Иоанна и т. д. Из древних сооружений были известны окружающие Амид-Диарбекир крепостные стены с 72 башнями, стоящие до сих пор. Со средних веков сохранялись 4 главные ворота («двери») - Армянские или Эрзерумские (северные, тур. Dağkarısı), Мардинские (южные), Римские (западные, тур. Rumkarısı) и Новые (восточные, тур. Yenikarısı или Şatkarısı, т. е. «Тигрские двери»). В числе знаменательных средневековых сооружений были древнейшая цитадель с названием Разрушенная крепость (тур. Virankalesi), акведук римских времен, доставляющий воду в город из обильного источника Амрват (Амрвар), бьющего на северном склоне Караджадага, полный рыб бассейн Чифт-илиджа, считающийся святым местом, и т. д.

К югу от Западного Тигра находились провинции **Дерик** и **Савур**, где накануне геноцида армяне, как правило, жили в административных центрах и немногочисленных селах. Это было результатом османского ига, так как в

упомянутых провинциях в 18-19-м веках была распространена насильственная смена вероисповедания. Последнее имело особо катастрофические последствия в Савуре, где со временем исчезло местное армянское полунезависимое княжество.

**Провинция Балу**, с 16-го века до 40-х годов 19-го века бывшая одним из полунезависимых княжеств (тур. *hükümet*), входила в число административных единиц Диарбекирского вилайета, в которых проживало большое количество армян. Одной из существенных особенностей княжества Балу было наличие армянских меликств. Хотя они подчинялись управляющим-амира Балу, имеющим армянское происхождение, но во внутренних вопросах пользовались значительной самостоятельностью. Были известны меликства Авава, Саручана или Оху, Ашмушата (район Аршамашата - древнейшей столицы Цопка), Хамышли (Гамишлук, Ехегнут), Пагина. Особо выделялась область Ашмушат, занимающая левобережье Арацани, которая фактически являлась своеобразным союзом отдельных меликских семей, обосновавшихся в нескольких населенных пунктах. Есть сведения также о меликах поселка Хамышли (Гамишлук) области Джавган. Некоторые факты позволяют говорить о военном сотрудничестве отдельных меликств и племен дымли Дерсима. Но постоянные войны против мусульманских (курдских и дымли или заза) феодалов, а также проникновение все новых чужеземных племен и усиливающееся давление разрушили былую мощь меликов Балу. Вследствие этого началась массовая эмиграция из города и сел Балу, и многочисленные армянские семьи были вынуждены уехать в разные места, вплоть до Киликии и даже Константинополя. Причем эмиграция продолжилась в течение всего 19-го века, крайне отрицательно отражаясь на национально-племенной характеристике провинции. Вместо уехавших армян на территорию Балу переселились многочисленные мусульмане (преимущественно дымли, а также курды и турки) из Харберда, Чапахджура и других провинций. Катастрофических размеров достигло также повсеместное обращение в мусульманство армян, еще в средние века примкнувших к греческому вероисповеданию (халкидонству). Вероотступники в Балу тоже были известны как «кескесы» - «половинчатые». Вследствие всего этого, если в начале 19-го века в провинции Балу (включая город-крепость) проживало 60000-70000 армян и 30000 «курдов», то почти через столетие соотношение изменилось в ущерб армянам: 22000-24000 и 60000-65000 соответственно. Одновременно, следуя традиционной политике разъединения провинций с многочисленным армянским населением, османские власти в 1885 г. провинцию Балу находящийся в составе Аргана-Маденского санджака, передали из Харбердского вилайета (Мамурет-уль-Азиз), Диарбекирскому вилайету, в составе которого она осталась до

конца Первой мировой войны. Примечательно, однако, что на территории провинции сохранились сформированные в средних веках внутренние области-нахии: Ашмушат (< Аршамашат), Буланух (Верхний и Нижний), Гекдере, Карабекская (Харабегская), Карачор (Харачор), Центральная или Мазрват (Мазрут < араб. Mâzr'âat - مزراعة, дословно – «мезре») вместе с Джавганом, Ун (Сарачор), Вошин (Ошин или Вешин), Сиван (< Севан), Оху или Ех (Хизол). При всем этом накануне Геноцида армян провинция Балу была одной из административных единиц Диарбекирского вилайета с довольно многочисленным армянским населением: по британским данным, до геноцида число армян в провинции, включая город, составляло примерно 26000 человек. До 70-х годов 19-го века в городе Балу было 4 армянских квартала по количеству церквей: Ереван (церковь Св. Григория Просветителя, Кафедральная церковь), Тонер (церковь Св. Богородицы), Св. Саак (церковь Св. Саака Партева) и Св. Киракос (с одноименной церковью). Несмотря на создававшиеся неблагоприятные демографические условия, вследствие которых кварталы Св. Саак и Св. Киракос уже в 80-х годах 19-го века почти полностью опустошились и стали необитаемыми, накануне Геноцида армян в городе Балу проживало примерно 6000 армян (почти половина населения). Многочисленностью отличались также села и поселки Авав, Дзет, Наджаран, Нехри (Нерхи), Пагин, Тил, Оху (Ех), Тепе (Блур) и Хошмат.

Что касается **провинции Маден**, то здесь, хотя армянское население встречалось анклавами, как, например, городки Маден (Аргни Маден) и Аргни, поселок Акл (Ангх) и ряд сел, но следы армян сохранились во многих населенных пунктах административной единицы (церкви, армянские кладбища, святыни). Был знаменит монастырь Превысокой (Высокой) Св. Богородицы (монастырь Аргни).

## REFERENCES

1. “Arewelk’”, K. Pölis, 1902, N 5042-5046 (**In Armenian**).
2. “Otchjet o pojezdke po Aziatskoj Turcii general’nogo shtaba podpolkovnika **Tomilova** v 1904 godu chast’ pervaja: Rajon Bagdadskoj zheleznoj dorogi ot Adany do Mosula”; chast’ vtoraja: “Podrobnyje marshrutnyje opisanija projdennyx putej ot Kavkaza cherez Kurdistan I Mesopotamiju k Sredizemnomu morju”, S.-Peterburg, 1907 (**In Russian**).
3. “Tigranakerti nahangi jarderë yew k’iwrteru gazanut’iwnnerë (akanatesi patmut’iwn)”, grets’ **T’ovmas G. Mkrtich’ean** (angliakan nakhkin der-hiwpatos Tigranakerti), Gahirë, 1919 (**In Armenian**).
4. “Tigris” taregirk’, Halëp, 1946 (**In Armenian**).
5. **Dzakhsurean Y.**, Patmut’iwn Balahoviti: Hnuts’ minch’ev mer òrerë, Pëyruť, 1974 (**In Armenian**).
6. GAT, **G. Srvandztyants’i** fond, “Lrats’uts’ich’ nyut’er”, vaveragir N 23 (**In Armenian**).

7. GAT, T<sup>4</sup>. **Azatyani** fond, bazhin III, vaveragir N 50 (**In Armenian**).
8. **Ghazarean Haykazn G.**, Ts'eghaspan t'urk'ë, Pëyrut', 1968 (**In Armenian**).
9. **Gippius A. I.**, Otchjet o pojezdke 1889 goda. Sbornik marshrutov, projdennyx v sovместnoj pojezdke D. D. Gedeonovym I A. I. Gippiusom po puti astronomicheskix rejsov Tureckoj Armenii, Kurdistane I Sirii, Tiflis, 1892 (**In Russian**).
10. **Gölöyea A.**, Haypat u zhamkoch' Sargis, "Biwrakn" shabat'at'ert', K. Polis, 1899, N 50-52 (**In Armenian**).
11. **Halajyan G.**, Dersimi hayeri azgagrut'yun'ë, Masn A. Hay azgagrut'yun yev banahyusut'yun (nyut'er yev usumnasirut'yunner), prak 5, Yer., 1973 (**In Armenian**).
12. **Inchichean Gh.**, Ashkharhagrut'iwn ch'orits' masants' ashkharhi: Asioy, Yewropioy, Ap'rikoy yew Amerikoy, masn arajin: Asia, hat. A, Venëtik, S. Ghazar, 1806 (**In Armenian**).
13. **Koljubakin A. M.**, Materialy dlja vojenno-statisticheskogo obozrenija Aziatskoj Turcii, tom 3, chart' 2, T., 1890 (**In Russian**).
14. **Khralean M.**, Balahovit (hay vorbi më aprummerë hayajinj sarsap'nerën): Hayreni yishatakaran, Sofia, 1938 (**In Armenian**).
15. **Krayean M.**, Balu: Balui keank'ën arnuats patkerner, yusher, ch'ap'atsoy k'ert'uatser yev ardzak ëjer, Ant'iliias-Libanan, 1965 (**In Armenian**).
16. **Melik'ean P.**, Hayreni shunch'ov, Pëyrut', 1969 (**In Armenian**).
17. **Mkund T.**, Amitayi ardzagank'ner, Uihök'ën, Niw Chërzi, 1950 (**In Armenian**).
18. **Muratean G.**, Ditoghut'iwn më - "Biwrakn", K. Polis, 1899, N 49 (**In Armenian**).
19. **Nat'anean P. Ts. V.**, Artösr Hayastani kam teghekagir Baluay, K'arberdu, Ch'arsanchagi, Chapagh Juri, yew Yerznkayu: Yaweluats ëst khndranats' azgasirats' Khizan gawar, K. Polis, 1883 (**In Armenian**).
20. **P'ap'azean T. S.**, Patmut'iwn Balahoviti, Niw York', 1963 (**In Armenian**).
21. **P'ap'azean T. S.**, Patmut'iwn Balu Hawaw giwghi (himnuats K'ristosë araj), Pëyrut', 1960 (**In Armenian**).
22. **Safrastyan A. Kh.**, Kostandnupolsi Hayots' patriark'arani koghmits' T'urk'iaiy ardaradatut'yan yev davanank'neri ministrut'yan nerkayate'vats haykakan yekeghets'ineri yev vank'eri ts'uts'aknern u t'ak'rimerë.- "Ëjmiatsin", 1965, N Zh, 1966, N A (**In Armenian**).
23. **Shwot M. T.**, K'iwrt pëk: Gtser hay-k'rdakan keank'ën, A hatorik, Bariz, 1903, B-G hatorik, Bariz, 1903 (**In Armenian**).
24. **Srvandztyan G.**, Yerker, hat. 2, Yer., 1980 (**In Armenian**).
25. **Sult'anean K.**, Balahovit, Ant'iliias, 1973 (**In Armenian**).
26. **T'öp'alean B.**, Hayreni giwghs Ökhu, Post'ën, 1943 (**In Armenian**).
27. **Tër Karapetean Gegham (Mshoy Gegham)**, Taröni vank'erë: Ughewori yishatakner, Yer., 2003 (**In Armenian**).
28. **Termen R. T.**, Otchjet o polevoj pojezdke 1907 goda v Vanskom, Bitlissskom I Diarbekirskom vilajetax, Tiflis, 1909 (**In Russian**).
29. **Tëroyeants' M.**, Balu, "Arak's" handës, girk' B, S.-Peterburg, 1897 [1894-1895] (**In Armenian**).
30. **Trdat yeps. Palean**, Hay vanorayk', Sb Ëjmiatsin, 2008 (**In Armenian**).
31. **Voskean H.**, Sebastiaiy, Kharberdi, Tiarpëk'iri yew Trapizoni nahangneru vank'erë, Vienna, 1962 (**In Armenian**).
32. Ye. Ch'arents'i anv. grakanut'yan yev arvesti t'angaran (GAT), T<sup>4</sup>. **Azatyani** fond, bazhin III, vaveragir N 12 (**In Armenian**).
33. **Yeruand K'asuni**, Amid (Tiarpëk'ir) - Tigranakert (Farghin) shp'ot'ë Hay patmagrut'ean mëj, Pëyrut', 1968 (**In Armenian**).